



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

375

376

377.

61

A-82

ԿՐՔԵՐ

Ե Կ

Նոցա ազդեցուրինք առողջուրեան վրայ

ԲԺՇԿԱ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ՉՐՈՋԱԼԵՐ

Ա. ԲԱԲԱՅԵՍՆԻ

II.

Թ. Ի Ֆ Լ Ի Ս

Համբ. Լոֆիաճեանցի և Ընկ. Տպարան.

1880



61

ԿԵՐ

Կ Ռ Ք Ե Ռ

Ե Ւ

Եղանակներին առողջութեան վրայ

ԲԺՇԿԱ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

Չ Ր Ո Ջ Ո Ւ Ր

• ՎՐԱՆԻ 10-1881 ՀԱՅԻ ՊՈՅԱՏՈՒՄ ՕՆՈՒՅՆԻ ՕՆՈՒՅՆՈՒՄ

ԲԺԻՇԿԱ Ա. ԲԱԲԱՅԵԱՆՑԻ

Արտաստղած „ՓՈՐՁ“ Հանդիսաց

Թ Ւ Ֆ Լ Ի Ս

Համբ. Էնֆիաճեանցի և Ընկ. Տպարան.

1880

16024 - սե

ՊԵԳԱՐ

Հայի մամդության ցիւմդության տքայ

ԺԱՌԱՄԱՅԻՆ ՓՈԽ-ԱՐՁԵԿ

ՊԱՅԱՋԱՐ

Дозволено цензурою Тифлисъ 1880 г. 16-го января.

Խաչարյան 1546

բանվաճառք ՀՊԱՓԱ նորականի

առողջություն

7892-17

Ա. Վ. Բ. Գ.

հայրարշ քայլ և պահանջմանքայլ պատշ

0882

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀՕՐՍ

ՄԱԿՏԵՍԻ ՄԿՐՏԻՉ-ԱՂԱՅԻ

Յ Ի Ղ Ա Տ Ա Կ Ի Ն

16024

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ſ t p u s u ſ t

բ Ա Յ Ա Տ Ը Ն Ո Ւ Թ Ե Ւ Ւ Ն

• **Приложение к книге**

Անցեալ տարի իմ «Ուսումնարանի առողջապահութեան հարցեր» վեր-
նագրով զբայկի վերջում վստահութիւն յանձս առայ հրաւէր կարդալու
մեր բժիշկներին և բնագլաներին՝ հասուցանել ինձ ժողովրդական գրուած-
ներ առողջապահութեան և բնագիտութեան վերաբերեալ։ Հրաւէրիս մէջ
յայտնած էի թէ՝ երբ բաւականացափ նիւթ հաւաքուի, մտազրութիւն կայ
կազմել մի յանձնաժողով, որի խմբագրութեամբ հրատարակուին այդ
գրուածները։

Ահա չուտով տարին կը լրանայ, ես մինչ ցարդ ոչ մի բժիշկից դրուած չստացայ և ոչ իսկ այն անձինքներից, որոնց մասնաւոր համակներով դիմութ էի: Իմ ձայնս արձագանք գտաւ միմիայն Մոսկուայի ուսանողաց մէջ: Պ. Հ. Առաքելեանը ուզարկել էր ինձ մի տետրակ օնել և խոնաւ ընակարանների մասին» և այս օրերս ստացայ պ. Հր. Տէր-Բարսեղեանից մի տետրակ օվորիկնը և նորան ջնջելու հնարյներ վերնազրով: Երրորդը իմ կողմից առաջարկեալ II տետրակս է Վլրքերի մասին»:

Այս բանը առաջուց ի նկատի առնելով՝ անցեալ տարուայ լիմֆաց գում ևս աշխատում էի այդ գործը՝ հեղինակութիւն և կամ նիւթական շատ միջոց ունեցող մի ընկերութիւնն հովանաւորութիւնն տակ դնել Այսպիսի հեղինակութիւն ունեցող ընկերութիւն նախ՝ տեղույս կայս Կովկասիան բժշկական ընկերութիւնն էր. Սորա նիստերի մէջ ևս կրկի անգամ արծարծեցի այս հարցը՝ մատնացոյց լինելով ընկերութիւնն կանո նազրութեան այս յօդուածներին, որոնց պահանջմամբ նա պարտական է հոգալ տեղական լեզուներով առողջապահական գրուածներ հրատարակելու բայց այս ընկերութիւնն մէջ մեր հարցը դարձեալ երկար վիճաբանութիւնց նիւթ դառնալուց յետոյ մինչ ցայժմ մի որոշեալ վախճանի չհասաւ, տեղացի բժիշկներից խմբագրական ժողով չհաստատուեցաւ և այն Հանգամանքնից է, որ գծուար թէ այս ընկերութիւնը կարողա

նայ շուտով մեր խնդիրը լրութեամբ իրագործել, քանի որ իւր նիւթական միջոցներն այժմս չատ սակաւացել են, թողարկ միւս հանդամանքները:

Երբ կազմուեցաւ թիֆլիսում Հայերէն զրբեր հրատարակող ընկերութիւն¹⁾, գորա ընդհանուր ժողովը բարեհաճել էր բացակայութեանս ժամանակ ինձ ընտրի խմբագրական յանձնաժողովի անդամ: Նախ քան այդ պաշտօնը յանձս առնելը՝ ես հետեւեալ պայմանը դրի Ընկերութեան Վարչութեան հետ, որ նա իւր հովանաւորութեան տակ առնի իմ սկսած գործը, ընդունի տպագրութեան իմ անունով եկած արժանաւոր զրուածները. բացի այս՝ ընդունի իմ ձեռուաց տակ եղած փոքրիկ գումարը և նուիրատուութիւնքս յատկապէս վերը յիշուած նպատակի համար առան ձի՞ն դրամագլուխ կազմելու: Վարչութիւնը սիրով ընդունեց առաջարկութիւնս: Սորանից յետոյ՝ ինքնըստինքեան իմ պաշտօնս որոշուեցաւ խմբագրական յանձնաժողովի մէջ, Ուրեմն՝ այսուհետեւ հայերէն ժողովրդական լեզուով առողջապահ ական և բնագիտական գործական ձները կ'ունենան կամոնագրութիւն, որին բացի իմ առանձին մամնակցութիւնս՝ աշխատակից են յանձնաժողովի բնագէտ ընկերակիցներս և դրսից այլ ևս մամնագէտ անձինք, որոնք կ'օգնեն մեղ և որոնք կ'ընդունուին ընկերութիւնից իրեւ աշխատակից անդամք, համաձայն ընկերութեան կանոնագրութեան:

Այս գործի համար ես նշանակել էի իմ անցեալ տարուայ հրատարակական դասախիոսութիւններից գոյացած գումարի մի մասը 110 ռ., որից գուրս գալով պ. Առաքելեանի տեսրակի համար եղած 10 ռ. ծախոր և սոյն այս առաջարկեալ տեսրակիս առանձին հրատարակութեան փոքրիկ ծախսը,—մնացածը յանձնում եմ Ընկերութեանը:

Այս II տեսրակիս բոլոր հրատարակութիւնը նուիրում եմ Ընկերութեանը:

Առաջին գրքոյկիս («Ուսումնարանի առողջապ. հարցեր») վաճառման արդինքը, դուրս գալով նորա տպագրութեան ծախսը, նոյնպէս պիտի յատկանայ Ընկերութեանը:

Կը մնայ ինձ նախ՝ դիմել այն անձանց, որոնք առանձին նշանակութիւն են տալի մեր ժողովրդի մէջ առողջապահութեան և գործադրելի բնագիտութեան օգտակար տեղեկութիւնքը շատ միջոցներով տարածելուն,—չիմայեն իւրեանց առանձին զրամական նուիրատուութիւնքը թիֆլիսի հայ հրատարակչական Ընկերութեան, որի զանձարանում այդ նուերները մասնաւոր զրամագլուխ սլիտի կազմնն յատկապէս յիշած նպատակի համար. երկրորդ՝ կրկին անդամ խնդրել մեր բժիշկներին, բնագէտներին, և բժշկ.—բնագիտ. ֆակուլտետների մեր պատուական ուսանողներին,—այսուհետեւ աւելի վատահութեամբ աշխատել և ժողովը գործական գործածները պատրաստել, յուսալով 1.) որ նոցա աշ-

խատութիւնքը կըվարձատրուին օրինահաստատ մեր ընկերութիւնից, համաձայն վարչութեան և խմբագրական ժողովի ընդունած վարձատրութեան պայմանների. և 2) որ նոցա աշխատութիւնքը աւելի արդար և բաղմակողմանի գնահատութեան կ'ինթարկուին խմբագրական ժողովից, քան թէ միակ մի անձի խմբագրական ճաշակին ենթարկուիլը: Այս հիմանց վրայ խնդրում եմ ցանկացողներին այսուհետեւ իւրեանց գրուածները ուղարկել ուղղակի Ընկերութեան Վարչութեան անունով՝ Առաջնորդութիւնը Տիֆլոսկагո Օնիշտեա աշխատանքայի Արքար Յովհաննիսիսի անունով:

Ուրախութեամբ յայտնում եմ, որ ընկ. Վարչութիւնը արդէն սկսած է պ. Տէր—Բարսեղեանի «Մորեխ և նորան ջնջելու հարաներ» վերնազրով ժամանակիս յարմար և կարեսը տեսրակի տպագրութիւնը, որ չուտով լոյս կըտեսնի. և կրկին որբագրութեան յանձնած է Առաքելեանի տեսրակը «Նեղ և խոնաւ բնակարանների մասին»:

Այժմ մի երկու խօսք առաջարկեալ տեսրակիս նիւթի մասին: Առաջի երկու հրատարակական զրոյցներս՝ ինձ թուի թէ՝ կարող են նոյն խոկ գաւառական ժողովրդի ընթերցանութեան նիւթ լինել. խոկ երրորդ զրոյցս ի նկատի ունի առաւել կրթեալ և սակաւաթիւ ընթերցողներ: Նթէ ես հրատարակում եմ վերջի զրոյցս առաջինների հետ, այդ նոցա նիւթի իրար հետ շատ սերտ կազ ունենալու պատճառով էր: Բայց արդարութիւնը պահանջում էր, որ ժողովրդի համար զրքոյկս հրատարակելով՝ միմիայն առաջի երկու զրոյցների տպագրութեան ծախսի համեմատ նշանակէնք զրքայկիս գինը. այսինքն շատ աժան:

1) Պաշտօնապէս՝ «Թիֆլիսի Ընկերութիւն հայութիւն գրքերի հրատարակութեան» կ'անուանուի այս ընկերութիւնը:

ՄԵԶ ՆԿԱՏԵԼԻ ԵՂԱԾ ՍԻԱԼՆԵՐ

Եր.	Պահ.	Թաղած է.	Թէ՛տի է Հարգեալ:
24	21	3) զարգացման	3) մտաւոր զարգացման
38	2	մտածում	մտածում եմ
»	20	Գրեզինդեր.	Գրիզինդեր
39	1	բերուածին	բերուած է
»	4	զանազա է	զանազան
42	15	կըյարուացնեն	կըյարուցանեն
44	13	կիրքերը.	ձիրքերը
45	23	Wandt.	Wundt
46	2	շատ մասը.	մի մասը

Digitized by srujanika@gmail.com

ԿՐՔԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ԿՐԲԵԾԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՅ
ՄԱՐԴՈՒՄ ԱՌՈՂ ՃՈՒԹԵԱՆ ՎՐԱ Յ
ՔԵԿԱ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

I.

Բ ովանդակութիւն — Կրքերի տեսակները և նոյս ազգեցութիւնը մարդուա կազմուածքի զանազան գործարանների վրայ։ Օրինակներ ժողովրդական կեանքից, դասախոսի բժշկական դիտողութիւններից և զանազան գիտնականների գրուածներից։ Փանի մի գործնական եզրակացութիւնք։

Տիկնայք և տեսարք,

Մեզանից ամէն մէկը առաջին անգամ դուրս գալով այս ամբիոնը կարծեմ թէ՝ իրաւունք ունի առաջուց ձեր ներողամտութիւնը ինդրեկու իւր դասախոսութեան թերութիւնների համար, որովհետեւ հրապարակական ճառախօսութիւն՝ այն էլ հասարակութեան համար, պահանջում է երկար փորձ և վարժութիւն, որին մենք առիթ չենք ունեցել ընտելանալու բացի այդ պէտք է ի նկատի ունենալ որ իմ ընտրած նիւթը շատ ժամանակ չէ, որ բնախօսական հետազոտութեանց և մշակութեան առարկայ է դարձած, Ուստի հաւաքուած տեղեկութիւնների մէջ իվաս զիտնական (սիստեմատիք) կապ անցկացնելը դեռ ևս շատ զժուարին է, ինչպէս այդ պէտք է պահանջուէր մի դասախուց ունենից, Այս պատճառաւաւ ցանկանում եմ դասախոսութիւնս անուանել հրապարակական թրույց յուսալով թէ՝ այսպիսի խօսակցութիւն, մէջ հաղորդելիքս, եթէ ոչ գեղեցիկ ոճով և զարձուածներով լինի, զոնէ պարանակէ իւր մէջ ձեզ համար դիւրը մբանելի և փոքը իշատէ զատակար տեղեկութիւններ:

U.

ի՞ն չ է կ ի ր ք ը .—կիրքն է հոգու զօրեղ շարժողութիւնը: Երբ մի որ և իցէ տպաւորութիւն մարդու մէջ սաստիկ կերպով զարթեցնում է համապատասխան զ գ ա ց մ ու ն ք ն ե ր, որոնք մտքի ընթացքը յանկարծակի կերպով փոխում են, այդ ժամանակ նկատելի է լինում հոգեկան յ ու գումն՝ կիրք: «)

Երբ մի զգացմունք և կամ մի զգայութիւն՝ չատ զօրեա
ղանալով մարդուս զիտակցութեան՝ միջ տիրապետել է տալի
միմիայն մի երկու գաղափարների նեղ շրջան, միաները բոլորո-
վին անհետացնում է մտքից, մենք ասում ենք մարդը կը ի ազ-
դեցութեան տակէ, Սաստիկ բարկացած մարդու գլխում միայն մի
բան կայ, որ իւր բարկութեան առարկային մի վկաս հասցնէ խօսքով
կամ ֆիզիքական հարուածով: Վախճանած մարդը իւր մտքերը բոլորովին
կորցնում է և այլն: Կրքի վերաբերութեամբ մանրամասն հոգեք ա-
նական մեկնուի իւն և բացարութիւններ ես կը թողնեմ մի այլ ժամա-
նակի և առանձին զրոյցի համար: Այժմ ուղղակի յառաջ բերենք կրքերի
գլխաւոր տեսակները:

Կրքերը ընդհանրապէս երկու ընդդիմագիր ձևով են արտայայտում, կամ հաճոյական՝ ուրախական և կամ տհաճ անբաւական զգացումներով, կամ սաստիկ գործումով (սէր, բաղդանք և ալին), կամ սաստիկ տիրութիւնով և իսորշումով (բարկութիւն, ատելութիւն, երիթութիւն),

Այդ ընդհանուրի բաժանումը կարելի է մասնաւորել երկրորդպատճուն՝ 1) ստորին՝ բնազգական, մեր սկզբն ական կենդանական նո-ին վերաբերեալ կրքերի (ա. ուրախութեան, անձնասիրութեան, մերսեռի պաշտպանութեան վերաբերեալ կրքեր, և թ. բարկութիւն, ցասումն վախ և այլն) 2) բարձր՝ կամ մտաւոր զարգացմամբ յառաջած մեր մարդկացին նո-ին վերաբերեալ կրքերի (ա. իդեալական սէրը, ընտանեկան կրքերը, հայրենասիրութեան չափազանց կրքերը, և թ. բարկութիւն անիրաւութեան դէմ, ոմակալութիւն անարդարութեան դէմ և այլն)։

Սի այլ տեսակէտից նայելով՝ կրքերը կարելի է բաժանել և հետևեալ կերպով, որ աւելի յարմար է մեր զրոյցի գլխաւոր նիւթին։ Այս բաժանումը կանու փիլմոփային կը պատկանի, որ բերուած է զանազան հոգեբանական գրուածների մէջ։

1) Душевное волнение. emotion Affect.

2) Чувство и ощущение. Gefühl und Empfindung.

3) Сознание, Conscience, Bewusstsein.

Ա. Կրքեր, որ չափազանց գրգռում և զարթեցնում են մեր կազմուածքի գօրութիւնները։

Ա. Կրքեր, որ ընդհակառակն՝ ընկճող և թուլացնող աղբեցութիւններին։

Բերենք այստեղ հոգեք աններից այդ երկու զասակարգին վերաբերեալ մի քանի կրքեր իրարու դէմ հանդիման։

Ուրախնութեան, ջնծութեան կրքեր

Խնդնահաւանութեան և խնդնասիրութեան կրքեր

Հիացումն ապդի ընթացքու բարկութեան և Քաջութեան կրքեր։

Ոգեսորութիւնն զիշոր են Նախանձ, խէթ, Վրէժինդրութեան կրքեր։

Այս կերպ փոքր ի շատէ խօսելով կրքերի էութեան և տեսակների մասին, այժմ դառնանք մեր գլխաւոր հարցին, թէ այս ամէն կրքերը ինչ աղղեցութիւն ունին են՝ կազմուածքի զանազան գործարանների և մեր առողջութեան վրայ։

Նախ և առաջ սրտի և արեան երակների կամ արեան շրջանի վրայ։

Բնախօսական հայեցքը ձիչդ բնախօսական հայեցքով—որ քննելու լինինք, պէտք է խմանայինք՝ ուղեղը բնչափոփ զղերով (ներվերով) կազուած է սրտի հետ, որ ջրով ինչ տեսակ աղղեցութիւն ունի սրտի վրայ։ Կենդանիների վրայ եղած փորձերը ինչ են ցոյց տալիս, թէ ուղեղի որ մասը այս և այն տեսակ գրգռուելուց ինչպիսի՝ սրտի երակների շարժումներ են յառաջ եկել։ Յատկապէս՝ որ կիրքը կամ հոգեան զրգիւը՝ ինչ տեսակ աղղեցութիւն է անում արհան երակների վրա և այլն։

Այս հարցերի սկզբնական մասը բնախօսութիւնը բաւականաչափ քննել է. բայց զանազան կրքերի աղղեցութիւնը սրտի և երակների շարժ։ Մասնց վրայ՝ դեռ ևս փորձերի և բնախօսական ձիչդ հետազօտութիւնները առարկայ նոր է դարձել։ Այժմ, օրինակ, կան փորձեր սրոշելու, թէ զանազան զրգիւների աղղեցութեան տակ որտի բարախու մը ինչ փոփոխութիւններ է կրում։ Զեղանից մի քանիսներին յայտնի պէտք է լինի որ բնախօսութիւնը ունի քանի մի տեսակի մեքենայութիւն սրտի շարժուաները թղթի վրայ դուրս բերելու զանազան ալեճն գծերով։ Որ կոչուածեն կարտի օգրամների աղղեցութիւնը (Սոստօյի Պլետիզմօպրաֆը) միջոց է տալի մարդուա

օրինակ, ձեռի երակների լայնանալ կամ սեղմությը զանազան հոգեկան գրգիռի ազդեցութեան տակ ա կնյայտն ի չ ա փել գրչածն սլաքների շարժումներով.

Սակայն այս ամենը դեռ սկիզբն է գործի և դժուար է դեռ այդ փոքրաթիւ փորձերից ընդհանուր և գործնական եղանակացութիւնք դուրս բերել, ուստի այդ փորձերի մանրամասնութիւնքը մի ժողովրդական զրոյցի մէջ այստեղ բերանացի միայն նկարագրելը անօգուտ կը լինի. Այնինչ եթէ դառնանք ժողովրդի դարեւոր դիտողութեանց և գիտնականների պատմած հաստատ դիպուածներին՝ մենք աւելի դիւրը մըունելի ցուցումներ կը գտնենք մեր հարցի վերաբերութեամբ:

Ուրախութեան և տրամութեան կրթելը.—Օրինակ՝ ժողովրդի մէջ տոփորական ոճ է՝ ռուբախութիւնից սիրտս թռթոււմ է։ Արտիշարժումը նմանեցվում է բռնուած թռչնիկի շարժումներին։ «Վախից սիրտս թռաւա այսինքն՝ սրտի յանկարծակի մի մեծ զարկը և յետոյ սովորականից աւել կանգ առնելը»։ «Քաղձանքներից սիրտս սկսեց դողդողաւու։ Շողիսրութիւնից սիրտս տրութեամ է կամ ճմլւում է» և այլ այսպիսի մերձաւորապէս գիւրըմբանելի բնախօսական նկատողութիւնք, քաղի դորանից թէ չափազանց կրթերի ազգեցութեան տակ սիրտը փոքր առ փոքր կանգնում է՝ սփրաց գնում է։ Թէ նոյն իսկ ուղեղը և ամբողջ կազմուածքը վտանգի են ենթարկւում, այդ ամսնի համար ժողովրդի դիտողութեանց մէջ ասպազոյցներ շատ կը գտնենք։

Ուրախութիւնից գտուիլ.—Օրինակ՝ ինչ է նշանակում հետևեալ ժաղովրդական խօսքը, մէկի կամ միւսի ուրախութեան աստիճանը նկարագրելիս, ուրախութիւնից քիչ էր մնում նա զգութիւ—միթէ զայլիակատար ապացոյց չէ այն բանին՝ թէ ժողովրդեան վազուցուանից յայտնի են զէպիեր, երբ չափաղանց ուրախութիւնից մարդ խելազարուել է։ Զեղանցից զուցէ չառերը վկայ եղած լինեն այսպիսի զէպի մեր սովորական կեանքի մէջ։ Մի այլ օրինակ. Հեռաւոր տեղից, երկար ժամանակուայ օտարութիւնից վերադառնում է յանկարծ իւր մայրենի քաղաքը մի գերգաստանի սրբած որդին։ Սորան տեսնող ծանօթները վազում են յառաջ, որ ծնողներին պատրաստեն այդ անսպասելի ուրախութեան, մեծ զգուշութեամբ հաղորդում են որդու վերադարձի աւետիաը և այլն, ինչո՞ւ համար է այդ զգուշութիւնը, որտինետե մի բազմափորձ ժողովուրդ, ինչպէս Հայոցն է, դարձեալ չէր կարող չփիտինալ շատ օրինակներ յանկարծակի մահուան՝ անսպասելի և մեծ ուրախութիւնից,

Մահուածալը շահագործութեամբ հազոր է լի - նոյն-
պէս շատերիդ յայտնի պէտք է լինեն դէպքեր նոյն խակ մեր կեանկում,
երբ մի անսպասելի մահուան բօթ (լուր) մերձաւորներից երկար ժա-
մանակ թափում է, սրսիս զի նորք ս տկաւ առ ս տ և ն ա խ ա-
պ տարած առ ս ւ ի ն և փ ո ք ր ա ռ փ ո ք ր ի ն կ ն ի ր ա ն ց հ ա ս կ ա ն ա ն ,
լուր ծիչը զիաւովիւնը յայտիսի ժողովրդական փաթձերը և դիտողու-

թիւնները բոլորովին անտես չի թողնի, մանաւանդ որ դոքա շատ անզամ ընդհանրացած են ամէն աղգերի մէջ դարերի ընթացքում, այն ժամանակ միայն գիտութիւնը մարդուս հոգեծանաշութեան մէջ աւելի բազմակողմանի կը լինի և աւելի հաստատ քայլեր կանէ կեանքի մէջ:

Անսպասելի ժառանգութիւն և երիտասարդի ցնորուփ-
լը—Յիշենք այստեղ անդզիացի հոգեբոյց Կրիչտօն—Բրաունի հետաքրքրա-
կան գիտողութիւնը։ Մի օր մի երիտասարդ անսպասելի հեռագիր ստա-
ցաւ, որ իւր համգույքեալ ազգականից նորան շատ մեծ հարատութիւն ժա-
ռանգութիւն է մնում։ Երիտասարդը՝ յանկարծակի ուրախութեան ազդե-
ցութեան տակ, նախ գունաթափուեցաւ, յետոյ սակաւ առ սակաւ երեսը
սկսեց կարմրի և գլուխը տաքանալ չափազանց հրճուանքի շարժումներ,
յետոյ անհանգտութիւն և հառաջանքներ։ Որպէս զի հանդարտուի, բա-
րեկամի հետ գուրս եկաւ մանգալու, բայց ոտները նորան լաւ չէին քար-
շում։ Միով բանիւ, ինչ երկարացնեմ, մարզը ներկայացնում էր սաստիկ
արբածի լիակատար պատկեր, երբ որ յայսնի էր, թէ երիտասար-
դը ոգելիներ (զինի, օղի և այլն) սովորաբար չէր դործածում և այն որը
մի պուտ բերանը չէր առած։ Սառը ջրով երիտասարդի զլուխը լու անալը
նորան հանդարտացրեց և միւս օր, ինչպէս սովորտկան արբեցողութիւնից
յետոյ, զգում էր սաստիկ յոզնածութիւն, զիսացաւ, ստամոքսի խառնումն
Մի երկու օրից յետոյ բաշկի օգնութեամբ երիտասարդը հազիւ առողջա-
ցաւ։

Ընդհանուր բացատրութիւն վերը յէշած երեսին
և երիւնակից մենք պարզ տեսնում ենք, որ ժողովրդի և բա-

Նաստեղութեանց մէջ գործածական ոճը որ վրա խոր թիւնից արբած, ոչ միայն մի սոլորսական փոխարերութիւնն է, այլ նաև հիմնուած է ձիչող դիտողութեանց վերայ, գրագիտութիւնը առաջապատճեած է, այդպիսի դիտողութեանց հիմունքով ընդունելով իրաւիւս ու գեղեկան վար են ցու և թեանց գոյութիւնը, զարմանալի նմանութիւնը գտնելով զինովցածի և ուրախութիւնից արբաժիշտ հիւանդական հրեցմների (սիմպոմների) մէջ. Այդ երևոյթների մանրամասն բնախօսական մեկնութիւնը մեզ չափ հետուան կարող էր տանել... մենք այսքանը նկատենք մեր վերջին օրինակից որ իրաւիւս ուղիւան գրգիւսը (միջաւուրախութիւնը) արեան երակների վրայ մնեա աղղեցութիւն ցոյց տուեց, ուրա նախ մեղմուեցան (երիտաֆարգը դունաթափուեց). յեայց ընդլայնացան (արեան հոսումն դէպի զրուխը զլսի տաքքանալը և այլն), Եթէ այդ աղղեցութիւնն ևս առաւել է, ուղեղի երակները երկար ժամանակ ընդլայնացան (թուլցած) գրաւթիւն մէջ մնում են (չափազանց արիւնառատ են լինում)՝ բանը խեցագրութեան աստիճանն է համառւմ. Եթէ կրքի աղղեցութիւնը չափազանց եւ առաւել է լինում, մինչև իսկ սիրա թուլացած և արիւնախեղդ կանդնում է՝ մահ... ու ուստի մաթիւ ոչ ու նասար զան ՈՒ Ճ նա ուրը.

Այլ երակաչար ժամանութեան ոյթներ.—Զափաղանց տը իր-
րութեան և հոգեկան կոկիծի ազդեցութիւնը ցոյց տալու համար
մեր չայց մոլովուրդը գործ է, ածում հետեւեալ սովորական խօսքերը՝ աւ-
րիւն—արցունք թափեց, արիւն—քրտինքի մէջ մտաւու
Բայց զիտէք, որ այդ խօսքերը հիմնուած պէսքէ լինէին զանազան ժամանակների ծիշդ իրողութեանց վրայ, որովհետեւ իրաւի արիւնախառն
արտասուք արիւնախառն քրտինք, բայց ժողովրդի այդ դիտողութիւնը,
զիտած և նկարագրած են ականատես բժիշկներ (Պարրօ, Յուանկէ և այլն)։
Եւ ինչ զարմանք, եթէ մտածենք՝ թէ իրաւի չափաղանց հոգեկան կոկիծի
ազդեցութեան տակ արտօսրաթոր լորձերը իւրեանց գործու-
նէութիւնը (արդ ունք թափելը) չատ և չատ պիտի աւելացնեն,
հարկաւ նոցա երակները այնքան առատ պիտի լցուին արիւնով, որ վերջը
արտասուքի փոխարեն արիւն արտաթորուի, Կոյնը կարող է լինել հոգեկան
յուզմունքի ազդեցութեան տակ զրդուած կաշու տակի անհամար քրտ-
նակ որ ձերի հետ ինչպէս եւ ուրիշ հիւթեր արտաթոր որո՞ն զ
գործարանների հետ, եթէ նոցա չափաղանց աշխատեցնենք։ Ի՞նչ զար-
մանք, ասում եմ, եթէ մենք մտաքերենք օրինակ՝ ամօթից մէկի
երեսը կարմրուած է, միւսի միմիայն կուրծքը կամ առաւել նեղքեի մա-
սուրը։ Նոյնպէս յայտնի է, որ հոգեկան առատիկ յուզման (վախի, բար-
կութեան) հետեւանք եղած է յանկարծակի արիւնահոսութիւն քթից եւ մա-
սաւանոյ այն զսրծարանից, որ արեան արտաթորութեան սովորաբար են-
թակաց է։

Աւարդ բնիշկը պատմում է հետեւալ զեղքը. Մի երեխայ, վողոցու մ

ձիուց սատիկ վախեցաւ և նոյն րոպէին նորա քթից առատօրէն արիւնը մկնեց վազել, երեկոյեան՝ երբ երեխայի հագուստը հանեցին, զարմացմամբ նկատեցին, որ նսրա մարմնի վրայ ոփուած էին արեան շառագոյն կարմիր բծեր և կէտեր Դօկտոր Առյօնը յիշում է մի յղի կին, որի բոլոր մարմնի վրայ մեծ—միծ արեան բծեր երենցան սառաիկ հոգեկան գրգռումունքից յիսոյ:

Սալիգմատիկ կանայքը՝ Սաստիկ գդացմունքների այս տեսակը, ԵՐԱԿԱՆԱՇԱԾՎԱԿԱՆ ազգեցոթիւններով միայն կարելի է մեկնել բնախօսական հայեացքով այն սփանչելի երեխյթը, որ սպավմատիվմ է կոչւում: Մի կին Միհնախէնի, մօտ բուռն կրօնական զդացման, ազգեցոթիւնն տակ՝ ամեն ուրբաթ օրեր որոշեալ ժամերում մտաբերելով, թէ ինչպէս Քրիստոս ախտի տանջուէր այն բակէն, երբ նորա ձեւքեր քենուում էին խացին և կամ գեղարդով ծակում էին նորա կողքը՝ երեսակայութեամբ այդ ցաւերը գդալուց՝ կնոջ բոններից և կողքից սկսում էր փոքր առ փոքր արին արտաթորել:

Ուզեղի մէջ կատարուած տառակի չարժութերը իրաւի որ մնձ աղ-
դեցովիւն ևն բանեցնուամ երակների վրայ և սոցա միջոցով կանագան
աւսովական սննդամիկան փոփոխութիւններ յաւաջացնուամ ամբողջ կաղմուած-
քի մէջ. այս աղդեցութիւնով միայն կարելի է մեկնել փոքր ի շատէ այն
գարմանալի երևոյթները որ ճռգեկան յուզմունքներից, այսինքն՝ կըքերից
յառաջ են գալի ամրող մորթային սիստեմայի մէջ:

Գիշլօ ա ի ն ի դ ա տ ա պ ա ր տ ու ա ծ կ ի ն ։ — Գաղղիական յեզ-
զափոխութեան ժամանակից պատմում են դէպք, երբ մի կնամարդի յայտ-
նեցին, թէ Գլուխուինի (գլխատութեան) պիտի ենթարկուի, նորա սկսուած
ըրտինը ընդհատուեց և միենոյն ժամանակ բոլոր մարմինը եւ գ ի պ տ ա-
կ ա ն ս և ա մ ո ր թ ի կերպարանք ստացաւ. Պատմում են դէպքեր, որ
ընդհակառակն էլ է պատահել, սեամորթը (նեգրը) հոգեկան սաստիկ զրգը
ուուներից բոլորովին սպիտակել է, ինչպէս կոպկասեան ֆեղի մարդ. Այս
միենոյն կարգին են պատկանում այն դէպքերը, որ անակնունելի չափազանց
վշտերից, չատ կարճ միջոցում, օրինակ՝ մի երկու գիշերուայ մէջ մարդու
մ ա զ ե ր ը ս պ ի տ ա կ ե լ ե ն, այսպիսի օրինակներ թէ պատմութեան ։
թէ ժողովրդի մէջ յայտնի են, ինը ժողովուրդը չատ անդամ յատկացնուու
սաստիկ վիշտը հետեւել խօսքերով—ոէ ս դ ա ր դ ի ց ։ ՞ ւ մ մ ա զ ը չ է
ս պ ի տ ա կ ի » և ա յ ն ։ Դօկտ. Ռէխմանը պատմում է մի այսպիսի դէպք
որ սպիտակեցին յանկարծ մի պարոնի զիիի և երեսի մազերի միմիայն կ է
մ տ ո հ ե ր ը և մանրամասն հետագօտութիւնը ցոյց տուեց, որ այդ գէսե
րում օդային մասեր էին աւելցած։

Անցեալ օր ինձ մօտ եկաւ Հաւլաբարցի մի երիտասարդ կի՞ն իւշ
պառաւ ազգականով իւր զանաղան հիւանդութեանց համար խորհուրդ
հարցնելու։ Ոյդ կնոջ ձեռների եղունփները ըոլորովին սպիտակ կամ բաց
դեղնագոյն էին։ Առաջի ամփամն էի տեսնում այդպիսի երեսյի, թ հարկ

իսկոյն ցանկացայ իմանալ ծննդական էր այդ երևոթը, թէ ստացական: Որպէս ինքը հիւանդը, նոյնպէս և պառաւը միաբերան հաստատեցին, որ այդ պատճեցաւ մի մեծ զգաղղութիւնից յետոյ, եթի կնոջ Երիկը մե-ռաւ և միւս օր նորա երկու երեխայք իրար յետեից վախճանեցան: Սկիբ-րում բոլոր եղանակները սպիտակ գոյն ստացան, յետոյ քանի զնաց դեղնեցան:

թոյլ տուէք ինձ այստեղ ընդհատել մեր օրինակների կապը և մի
երկու խօսքով բացատրիլ ձեզ մեր նիւթի դասաւորութիւնը, որպէս զի
բերածո օրինակները ձեր լիշողութեան մէջ խառնաշփոթ չմնան. քննելով
կրքերի ազդեցութիւնը սրտի արեան երակների վրայ մենք տեսանք, թէ
իրաւի որպիսի մեծ դեր է խաղում կազմուածքի մէջ ուղեղի ամենասերտ
կազմութիւնը արեան երակների հետ. այդ երակ աշարժ ական ե-
րեայթներն են, որ զանազան տեղական մննդական փոփոխութիւններ
իսկ յառաջ են բերում զանազան գործարանների մէջ. Ոչ տք էր այժմ մեզ
շարունակել այդ քննութիւնը և միւս գործարանների վերաբերութեամբ ըստ
կարգին. Սակայն, մինչև այդ կատարելը յարմար եմ համարում առան ձին
կերպավ խօսել բարկութեան և երկիւղի մասին, որովհետեւ
սոցա հետանքները ընդհանրապէս կազմուածքի վրայ շատ աչքի
ընկնազ են և առվորական:

բարեկութիւնը կամ նորա աւելի բարձր աստիճանը՝ ցանումը
նոյնպէս մնձ ազդեցութիւն են գործում նախ և առաջ սրտի և արեան ե-
րակների վրայ, պատճառում են զօրեղ հոսումն արեան դէպի գլուխը. եր-
բեմն ազդելով չնչառութեան վրայ ուշացնում են արեան ազատ վերա-
դարձը դէպի կուրծքը. Ո՞վ ձեզանից տեսած չէ սաստիկ բարկացած մար-
դու կարմրած երեսը, գործ ընկած աչքերը, որով մարդն աւելի գաղանի
նմանութիւն է բերում, և կամ այլ դէպերում երեսը բոլորովին գունա-
թափ, իսկ աչքերից կայծակ է ցացում, որ նշան է, թէ երեսի երակներն
ևս սեղմուած՝ բոլոր արիւնը դէպի ուղեղն է վաղում.
Հաստ բժիշկներից նկարագրուած են դէպեր, երբ բարկացած մարդը
այն աստիճան գրգռուել է, որ լեզուն կապ է ընկել ամբողջ մի քանի
շաբաթով, Ես ինքո յիշում եմ մի պարոն, որ հասարակ տնական վիճա-
րանութեան ժամանակ, մի թեթև հակառակութեան ողատճառով այն աս-
տիճան գրգռուակ, որ սկսեց խելազարի նման դուալ և ճշալ, այս և այն
կտղմ վազել. Հաղթ կարողացայ սառը ջուր խմացնել տալով նորան հան-
դարտացնել, Ուշադրութիւն դարձնելով, որ այդ պարոնը իւր պատճանե-
կութեան հասակում սաստիկ բարկութիւնից մինչև անգամ անգամալու-
ծութեան հանդիպած էր, որից հազիւհազ երկար տարիների ընթացում կա-
րողացել էր առողջանալ, ես պարաք համարեցի զգուշացնել բոլոր ազգա-
կաններին, որ աշխատեն՝ որբան կարելի է հեռու պահեն այդ պարոնին
բարկութիւնից, եթէ ոչ, շատ հաւանական է, որ կրկնի անգամ անդամա-
լութեան պատճի ուղեղի երակների մէկի կամ միւսի պատճեկուց

բարկութեան յուզման ազդեցութեան տակ. Պարուն ընդհանրապէս շատ
բարեսիրտ ազնիւ մարդէ.

Բարկութեան ազդեցութիւնը մօր կաթի վրայ Աժմ
գիտութիւնը ընդունում է իբրև հաստատ փաստ որ սաստիկ հոգեկան
գոգումը և գիտաւորապէս ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ սարսափելի կերպով ազդումէ
մօր կաթի վրայ Եւ իրաւի, եթէ ուղեղի սաստիկ գրգումից մար-
դուս մորթի խաւերի բաղադրութիւնը կարող է փոխուիլ, այս և այն գոր-
ծարանը արիւնով կարող է լցուցիլ, ինչ զարմանք՝ եթէ բարկութեան
կրքի ազդեցութեան տակ մօր կաթի մէջ ևս քիմիական փոփոխութիւն յա-
կագի բաղադրութիւնը այն սաստիճան փոխուի, որ
ուած գայ, այսինքն, կաթի բաղադրութիւնը այն սաստիճան փոխուի, որ
թունաւորիչ ազդեցութիւն ունենայ սանկերի (ծծի երեխայի) վրայ. Թէ
ինչ կերպ է վնասմ այդ փոփոխութիւնը՝ զորա լակատար մեկութիւնը
չի տավի մեղ առ այժմս մեր գիտութիւնը, Բայց իրողութիւնը անկարելի է
ուրանալ: Մեր Հայերիս մէջ, կասեք մէկ՝ այդ դիտողութիւնը նոյնպէս
անլայտ չէ, սրովհետեւ շատ անգամ մայրերից լսում ենք գկաթս դիպաւ
խօսքը: Խոկ թէ բարկութեան ազդեցութեան տակ մօր կաթը կարողանար
երեխային մահ պատճառել՝ այդ բանին մեր ժողովրդականք, կարծեմ,
դեռ համոզուած չեն, Ես շատ լաւ յիշում եմ իմ բժշկական գործունէու-
ղեռ համոզուած մահ (1873 թ.) մի առողջ ստընկեր մանկան յանկարծակի և անսպա-
սելի մահը, բոլոր հարց ու փորձից միմիայն մի պատճառ կարողացայ
գտնել այդպիսի մահուան—մօր կաթ տալը, սաստիկ սրտնեղած և բարկա-
ցած գրութեան մէջ տնական անհամութիւններից—ուրիշ ոչ մի պատճառ
չկար... Միտսէ ինչպէս շրջապատողք (պառաւներ և երիտասարդներ)
բոլորը զարմացան իմ կարծիքին և չէին հաւատում, որ սաստիկ բարկա-
ցած մօր կաթը կարող է ծծի երեխային յանկարծամահ առել: Այդ բանին
ուրիշ ապացոյցներ և օրինակներ շատ կան բժշկական տարեգրութեանց
մէջ, չեմ կամենում ձեզ ձանձրացնել միակերպ օրինակներ շատ յիշե-
լու:

Բարկութեան կրքից նկատուած են գեղնութիւն, աչքի չլու-
թիւն, և մկանանց ցնցումն եր: Միւրչսաօն բժիշկը պատմում է
թէ մի զինուոր իւրեան շատ անսպատաւած զգալով՝ սաստիկ բարկացած,
վրայ պրծաւ զէպի իւր հակառակութզը, այդ բոպէին ուրիշները բռնեցին
նորա ձեռքերը, որ չկարողանայ զարկել (խփել)՝ խկոյն և եթ զինուորի
երեսը և բոլոր մարմինը գեղնեցաւ և նա մկանանց ցնցումներ ցոյց տա-
լով երեք ժամում վախճանեցաւ . . .

Այժմ տեսնենք թէ՝ վախը, սաստիկ երկիւղը ինչ հետևասքսար
կարող է ունենալ մարդու առողջութեան վրայ։ Զղական հիւանդազիտու-
թեան ամէն մի դասագրիի մէջ մեծ դեր է տրվում վախին կամ
սարսափին՝ իբրև ամենաստէպ պատճառի։ Զղական հիւանդութեանց։
Բերեմ ձեզ օրինակներ իմ թշշկական զիազութիւններից։
Ինձ մօտ ըմշկուում է, ահա մի քանի շաբաթ է, մի թիվլիսեցի կին,

որ կրոսմ է առուրբ վիտափի կաքառումն» կոչուած հիւանդութիւնը, այն է թէ՝ մի նպատակաւոր շարժում անելիս ձեռքերը սկսում են ան-նպատակ ցնցումներով խանգարել այդ շարժմանը, և կամ բոլորովին հան-գիսու նստած տեղ անդամները անընդհատ թռչկոտում են։ Այդ կինը շատ շնորհալի կարանող՝ իւր զերդաստանի գիսաւոր նեցուկն էր, տեղույս շատ հարուստ գերդաստաններին յայտնի իւր արհեստով. այժմ բոլորովին զբո-կուած է գործից, որովհետև ասեղ բռնվիս՝ ձեռքն սկսում է դէսուդէն թափ տալ։ Այս հիւանդութեան պատճառը գիտէք ինչ է եղել։ Մի մուկ կինը անկողինը պառկելիս նկատում է յանկարծ իւր բարձի վրայէն վա-զող մուկը և այդ ժամանակից ահա բոլորովին առողջ կինը սկսեց ձեռ-քերի աննպատակ ցնցումներ երեցնել, որ ահա չորս տարի է օր աւուր աւելանալով՝ յուսահատութեան են հասցնում իւնդ կնոջը։

Մի ամիս առաջ տեղույս կայսերական կովկաս. բժշկ. ընկերութեան ներկայացրի գանձակից ինձ մօտ եկած մի հիւանդ—Մ. աղդանունով. Սա իւր տեղումը մաքսատան ձիւաւորի (օբէզդչիկի) պաշտօն է եղել վա-րելիս։ Իւր պաշտօնի մէջ քանի մի թշնամիք էր ճարել, որոնք սպառնա-լիս են եղել նորան պահնելու։ Այսուհետեւ Մ—ը շատ զգոյշ էր։ Մի ան-գամ ձիով անցկենալիս՝ բաւական մօտ տեղից նորան լսելի եղաւ հրա-ցանի արձակում։ Նա կարծելով այդ իւր թշնամիներից և սարսափելով՝ ձիու զլուխը բաց էր թողել մինչի տուն։ Միւս օր նորա ճախ կուռը (բազովը) անդամալուծուածի պէս էր, մի ամիս չանցաւ, բոլոր նորա ճախ կողմը սկսեց անկանոն շարժումներ երեցնել թէ քայլելիս, թէ ձեռով գործ տեսնելիս։ Այդ մարդու վրայ ցոյց տուի բժշկ. ընկերութեանը մի այլ երեսիթ (որին հիւանդն ևս տեղեակ չէր). Նորա մի կողմի զգայականու-թիւնն ես պակասած էր։ Ասեղի ծակոցը ճախ կողմում վերեից ներքե կամ ամենելին և կամ շատ ուշ էր իմանում։ Քինա-քինան լեզուի ճախ կող-քին ածած՝ լեզիութիւն բոլորովին չէր զգում, մատով որ սակաւ ինչ աջ կողմն էի տանում—զգում էր։ Այդ կերպ մի կողմի զգայութիւնը առողջ ունենալով միւս կողմի պակասութիւնը հիւանդին աննկատելի էր մնացել։

Դմ հիւանդներից ես կը յիշեմ ձեղ և մի ուսանող, որ բացի մի այլ պատճառ, հարցած ականակ անհանդս տութիւնների և վա-խերի աղջեցութեան տակ, գիմնազիօնում աւարտելիս աւելի թե թե, իսկ համալսարանի առաջի տարիների հարցաքնութեանց ժամանակ ա-ռաւել սաստիկ կերպով հանդիպեցաւ կուրծքի մկանունքների ժա-մանակաւոր ցնցողութեանց, որ լուպէական չնչարգելութիւն կամ ասթմ է կոչվում։ Այդ հիւանդութիւնից երկու տարի Պետերուրդ բժշկուելով և մի քանի տարի ևս այսուեղ թեթևութիւն չէ գտել, և այժմ նորա զվաւոր ցանկութիւնն է որ կարողանայ գէթ փոքր ինչ մտաւոր աշխատութիւնով պարաւել։ — Ոչ երկար խօսակցել և ոչ կարգալ նորան կարելի է առանց չնշարգելութեան հանդիպելու։ Ինքը իրաւի շատ ընդունակ և պատուա-կան հոգւոյ տէր երիտասարդ է, որ զրկուած է այժմ իւր այդ յատկու-թիւնը յօգուտ իւր և հասարակութեան գործածելուց։

Նոյնպէս յայտնի են շատ դէպքեր, որ վախից և ահից երեխայք թալկա ցում (էպիլէպսի) կոչուած—մեծ մասնվ անբուժելի հիւանդու-թեան են տիրացել։ Եւ այդ օրինակների մէջ սակաւ դեր չեն խաղացել և դեռ խաղում մեր գաւառների չափազանց խստաբարոյ ճնողիքը և վարժա-պետքը, որոնց բոլոր մանկավարժութիւնը—մեխօղիկ և դիտակտիկ—իւ-րեանց ձեռի գաւառանի (փայտի) ծայրումն է . . . Աչքովս տեսած այս պիտի մի գաղանաբարոյ վարժապետի օրինակը ևս բերած եմ իմ պլուսմա-նարանի առողջապահութեան հարցերով վերնագրով գրքոյիկ մէջ գտնա-ման մասին իրողութիւններից յետոյ մասձեցէք թէ՝ որքան վտանգառու և անմիտ են մեր ժողովրդի մէջ գործածական այն խաղերը, որով հասակա-ւորները սարսափելի սատանայական ձևեր ստացած քրօօրօ անուամբ աշ-խատում են երեխայոց վախիցնելով նոցա լացը կտրել և կամ երեմն նոցա իբրև թէ զուարծութիւն պատճառել, Այն, այդ քրօօրները մի երեխայի զարմացումը կը շարժեն բայց միւս թոյլ ջղային կազմուածի տէր երե-խային կը սասանեցնեն մահու աստիճան։ . . . Թէ առհասարակ երեխայոց պատիմներ նշանակելիս որպիսի միծ զգուշութիւն և ընտրութիւն է հար-կաւոր—ահա ձեղ ապացոյց հաստատ աղբիւրներից վեր առած։ Մի մայր իւր երեխայի վրայ բարկացած՝ գոցեց նորան սովորական մութ պատժա-րանի մէջ, որ կարցեր է կոչվում։ Մի քանի ժամից յետոյ գնաց մայրը իւր չար տղին դուրս բերելու և . . . նորան մեռած գտաւ—. . .

Ֆրանսիացի երեելի վիրաբոյժ Պտիի բժշկական պրաքտիկից յիշում են, ինչպէս մի հիւանդ, որին պէտք է Պտին թեթև օպեր բացի անէր, անսներով յանկարծ զանակի փայտումը վիրաբոյժի ձեռին, վախից իսկոյն հողին աւանդեց։ Այսպիսի դէպքերից է ահա, որ այժմ նոյն իսկ զինուու-րական հիւանդանոցներում առանց հիւանդի վճռողական յօժարութեանը էլ չեն ստիպում նորան վիրաբուժական անդամահատութեան անխօս են-թարկվելու։

Սարսափիք, երկիւղը ինչպէս որ անհատի վրայ մշեալ ազդե-ցութիւններն է բանհեցնում, նոյնպէս և մեծ խումբ երի վրայ։ Դիւ-րան բժիշկը պատճում է, թէ իւր ծառայած հիւանդանոցում, 100 հիւանդի շաքարի ջուր (շարբաթ) տրուեցաւ։ յետոյ սաստիկ վախով հիւանդներին յայտնեցին, թէ այդ քաղցր ջուրը շատ ճանր վիխողական դեղ է եղած, այդ պատճառաւորի բժիշկը մեծ անհանգստութեան մէջ է հիւանդ-ների նկատմամբ, ի՞նչ էր կարծում, փոքր ժամանակ անցաւ, չանցաւ, 100 հիւանդից 60-ն ականցին սաստիկ կերպով ստոմաքը յետ ածել, միւսները ստոմաքի խառնումն ներկայացրին։

Այս իրողութիւններից յետոյ մեկ բոլորովին անհաւատալի չպիտի թուին այն դէպքերը, որ վիճակ ականայ գէթ փոքր ինչ մտաւոր աշխատութիւնով պարաւել։ — Ոչ երկար խօսակցել և ոչ կարգալ նորան կարելի է առանց չնշարգելութեան հանդիպելու։ Ինքը իրաւի շատ ընդունակ և պատուա-կան հոգւոյ տէր երիտասարդ է, որ զրկուած է այժմ իւր այդ յատկու-թիւնը յօգուտ իւր և հասարակութեան գործածելուց։

մեռնի, Յիշւում է դէպք, երբ միջի մարդիկ ոչ մի բաժակի մէջ թոյն չեն լցրած, յուսալրվ թէ կրքերը կանցնին, և հակառակորդները կը հաշտուին, Հակառակորդները մաքուր զուր խմելով և իւրաքանչիւրը թոյնը իւր բաժակի մէջ կարծելով, երկումն ևս թոնաւորութեան զարմանալի նշաններ են ցոյց առւել, մինչև որ միջի մարդիկ չեն յայտնել իւրեանց իւա դի մասին...

Քոլերա—ժանտախտի ժամանակ շատ բժիշկներ զիտել են և միաբերան հաստատում են, որ վախլուկ անձինքը առաւել չուտ են հիւանդաւանում, և սոքա են քատ մեծի մասին, որ այդ հիւանդութեան միմիայն թեթև երևոյթներն են ունենում (քօլերին), որովհետև շատ անգամ խկան ժանտախտը չէ զիտած նոցա, այլ վախլոց միայն հիւանդացած են:

Այսքանն բաւական է բարկութեան և երկիւղի մասին առանձին,

Այժմ երբ կը ակնենք քննել ընդհանրապէս կրքերի աղղեցութիւնը կազմուածքի միւս գործարանների վրայ, մենք դարձեալ պիտի հանդիպինք տեղ-աւել այդ երկու գլխաւոր կրից վտանգաւոր հետեանքներին:

Կրքերի ազգ դեպութիւնը աննդական դուրծարանների վրայ, որ սաստիկ հոգեկան յուզմունքից—ցաւի, կոկիծի, սաստիկ ուրախութեան, ըարկութեան և այլն աղղեցութեան տակ—կորցրել ենք մեր անործակը, ինչպէս ամփում է օթիքէն (բրդունքը) զօռով կուլէ գնացել:

Բժիշկների հաստատ վկայութեամբ յայտնի են դէպքեր, որ սաստիկ ան բաւական ու թիւն ից ոչ միայն ախորժակի պակասութիւն, այլ և ստոմաքի նոյն իսկ բորբոքումն է պատահել բոլոր իւր անախորժ երևոյթներու—տաքութիւն, ստոմաքը յետ ածել և այլն:

Թէ յանկարծակի վախը կամ սարսափը ազիքն երի վրայ ինչ մեծ աղղեցութիւն ունի—այդ վակատար հաստատվում է զանազան աղղերի մէջ ընդունուած ժողովրդական ծիծաղաշարժ առածներով «փորացաւի» վերաբերութեամբ:

Հայոց ռազեկանութիւնը իշեցնում է, որ սաստիկ վշտից աղղեների ջղական ցաւեր ևս զիտուած են:

Մննդական գործարաններից մինն է Լեսլիոլ. սորա արտաթորուծնիթն է լեզին կամ մաղձը, որ աղիքների մէջ լցուելով մննդաղործութեանը նպաստում է: Հոգեկան գրգիռների աղղեցութիւնը լեարդի գործողութեան կամ մաղձի վրայ ամենաին ժամանակներից յայտնի երևոյթ է, Սեր ժողովրդի մէջ շատ արմատացած մի խօսք է՝ «բարեկութիւն ից մազաւ խառնութեց և կամ երկիւղի աղղեցութիւնը մաղձի կամ լեզուց վրայ ահա ինչպէս է արտայայտում մեր ժողովրդը»: Վախլոց լեզուակատար լինել և այլն որ կը նշանակէ թէ՝ զիտուած է կամ վախլոց զանազան լինել և այլն որ կը նշանակէ թէ՝ զիտուած է կամ վախլոց

մաղձի չափականց կոորս թափելը և կամ մաղձի տարածվիլը բոլոր մարմնի մէջ դեղնութեան սարսափելի մէջ դեղնութեան ուրիշ շատ հետաքրքրական դէպքեր են պատմուած: յիշենք մի երկուսն են:

Այս վախլու բժիշկը պատմում է մի օրիորդի մասին, որ առանց որպես հիւանդութեան, միմիայն ուրիշ նախանձիւացաւ, այդ դեղնութիւնը մի քանի շարաթ տեսեց բոլոր մարմնի վրայ:

Ստրագբուրդի և Փարիզի պաշարման ժամանակ, երբ այդ քաղաքների մէջ ընկնում էին անսպասելի կերպով թշնամիաց գնդակները և սարսափելի մէջ կերպով պայթում, դեղնութեան դէպքերը, ըստ վկայութեան բժիշկների, զարմանալի շատ շատացել են, չինչելով այսեել ուրիշ զանազան ջղական հիւանդութիւնքը...

Կրքերի ազգ դեպութիւնը մի զային գործարան ների վրայ:

Հոգեկան գրգռմունքների աղղեցութիւնը երիկամունքի վրայ բաւական յայտնի մի իրողութիւն է: Վաղուցուանից բժշկները դիտած են միզի աւելանալը զանազան կրքերի աղղեցութեան տակ: բնախօսները նմանեցնում են այդ աղղեցութիւնը ցուրտի աղղեցութեան որ աղղերով մորթի երակների վրայ արինը մղում է դէպի ներսի գործարանները, մանաւանդ դէպի երիկամունքը, որտեղից և առ ատանում է արտաթորումը: Որպէս ուրիշ շատ բժիշկներ նոյնպէս և ինքս շատ անզամ զիտած եմ հարցնանական անհանգատութեանց աղղեցութեան ներքոյ մարդուս կազմուածքից սովորական ձանապարհով ջրի շատ յաճախ արտաթորելը: Եթէ գրգռմունքը կամ կրքերը չափազանց զօրել են եղել, այդպիսի դէպքերում շատացած միզի արտաթորութեան մէջ փոխանակ սովորական նիւթերի, մեծ քանակութեամբ շաքար ևս գտնուել է (զիկօզիկրի), երբեմն պատահել է որ շաքարի արտաթորումը յարատել է և այդ կերպ մարդու տիրացած է հաւանու և մաշու շաքարի հիւանդութեան (դիաբետ):

Տոմմասի բժիշկը շատ հետաքրքրական դէպքեր է՝ հրատարակել շաքարի կիւանդութեան մասին, Մի հայր՝ լսելով որդու ինքնասպանութիւնը նոյն օրից շաքարի հիւանդութեան ենթարկուեց: Նոյն հիւանդութեան տիրացաւ մի երիտասարդ, սաստիկ յուսահատուելով շան կծելուց, որ կատաղած էր համարում, որեմն և կատաղած շնից թոնաւորուած կարծելով իրան:

Կրքերի ազգ դեպութիւնը սեռական գործարան ների վրայ—հէ միայն բժիշկներից այլ և մողովրդի մէջ հետաքրքրական շատ օրինակներով զիտուած իրողութիւն է: Զովելով չափազանց ծանրաբեռնել ձեր յիշովութիւնը՝ ես այսեղ մի քանիւր միայն յիշեմ: Զանազան վշտերի զանազան կամ սկաների, կամ սկաների, կրօնական զգացման աղղեցութեան տակ

սեռական գործողութեան երկար ժամանակով բոլորովին թուշանալը յայտնի փաստ է: Նոյն այդ հանգամանկներից կանանց սովորականների ընդհատութիւն նպանակէս յարտնի է: Որոֆես. Մանասէյինը պատմում է մի կնոջ մասին, որի սովորականները բոլորովին ընդհատուեցին այն ժամանակից, երբ, նա իւր երկան ճանապարհ ճգեց զէսի Սիբիրիա դատապարտեալների շարքում: Նև քանի մի տարուց յետոյ նորից սկսուեց նախկին կարգը ուրախութեան աղեցութեան տակ, երբ լսեց իւր երկան համար թողութիւն և նորա վերադարձը: Կրքերի բուռն զօրութիւնից արի նահոսութիւն արգանդից—այդ շատ անգամ զիտուած է: Այդ իրազաւթիւնից յետոյ չպէտք է գարմանանք, երբ իրաւի փորձառու մանկաբարձներ և նոյն խիկ ժողովրդի համոզմունքը հաստատում են՝ կրքերի զարմանալիք ազգ եցու թիւնը արգանդի պտղի վրայ: Ժողովրդի մասն նշան կը լմնի: Կամ թէ՝ ռերեխէն առաջին անգամ ում դէմ խաղայ՝ նորա պատկերը կունենայ, և այս: Այդպիսի խօսքերը բառացի մտքով չէ կարելի ընդունել, բայց թէ՝ յդի կնոջ սաստիկ հոգեկան գրգռումներից, արգանդի պտղի երակներն են զանազան փոխութիւնները: Օրինակ, մասում է, ամայրը կթէ մի մկից վախենայ՝ երեկի վրայ մկի նման նշան կը լմնի: Կամ թէ՝ ռերեխէն առաջին անգամ ում դէմ խաղայ՝ նորա պատկերը կունենայ, և այս: Այդպիսի խօսքերը բառացի մտքով չէ կարելի ընդունել, բայց թէ՝ յդի կնոջ սաստիկ հոգեկան գրգռումներից, արգանդի պտղի պատղի երակներն են զանազան փոխութիւնները: Այսպիսի փաստերից յետոյ հասկանալի է, որ եթէ հոգեկան բոլորովին առողջ նախորդներից՝ ծնողներից ապուշ մանուկ է ծնում՝ գորա պատճառը պէտք է որոնել շատ անգամ մօր յդի ժամանակի չափազանց մասն սատիկ հոգեկան գրգռումներից, —սոքա անհերքելի փաստեր են: Այսպիսի փաստերից յետոյ հասկանալի է, որ եթէ հոգեկան բոլորովին առողջ նախորդներից՝ ծնողներից ապուշ մանուկ է ծնում՝ գորա պատճառը պէտք է որոնել շատ անգամ մօր յդի ժամանակի մանուկի փիզիքական անկատարելութիւնները, այլանդակութիւնները, որ մեզանում հարցը են համարիում, շատ ապաման մօր յդի ժամանակուայ հակառակ ողջական կետ է առաջին պէտք է վերագրել: Այս բացատրութիւններից ամենիդ պարզ է այժմ, թէ որքան մեղապարտ են իւրեանց սերնդոց առջև այն հայրերը մեր գաւառներում, որ բոլորովին զաղանաբար են վարվում իրանց յդի կանանց հետ, որքան մեղապարտ են և բարձր դասերի մայրերը՝ որ իւրեանց անբնական և չափազանց կրքալի կեանքը շարունակում են նոյն խոկ յդի ժամանակ:

Թէ որպիսի մեծ ազգեցութիւն ունին կրքերը ընդհանրապէս բոլոր արգանդի վրայ, կերեայ հետեւելից, Յայտնի են դէպքեր, որ ծննդեան ժամանակ՝ երբ երեխին աշխարհ տեսնելու վրայ էր, այս և այն հոգեկան սաստիկ գրգիռը մանաւանդ գ վախւը՝ ծննդկանի վրայ սաստիկ թուլացնող կիրպով են ազդել, արգանդի ամփոփուելը բոլորովին ընդհատել է և որդեմնութեան զործը ժամանակաւոր կերպով յետ ընկել...

լ է ն ն է ք մեծանուն բժիշկը պատմում է, թէ Փարիզում կար իւր Ժամանակին մի կուսանաց վանք: Սարսափելի խ ի ո տ էին այդ միարա-նութեան կանոնները: Այդ կանոններով հրաժանակագրութիւնը անդամակցող կոյսի կ ա մ ք ը ամէն հնարով կ ո տ ր ե լ ու էին աշխատում, այնպէս որ միա-բանութեան կոյսը ոչ մի անհատական կամ անձնական ձգտում չպիտի ցոյց տար, ոչ մտաւոր պարագմանց և ոչ իսկ ընկերական խօսակցութեանց մէջ. նոցա ուշաղրութիւնը աշխարհիս ամէն տեսակ պայմաններից հեռու պիտի մնար զանազան աեսակ առաջուց որոշուած կրօնական անընդհատ քաղուածքներով. նոցա ամէն մի քայլը առաջուց որոշուած էր: Ի՞նչ է ք կարծում, իւրաքանչիւր նորեկ կոյսի ամսականները շատ չուտով բոլորովին ընդհատուում էին և մի երկու տարուա, մէջ կոյսը տիրացած էր լինում Բ ա ր ա կ ա ց ա ւ ի: Այնպէս որ 10 տարուայ մէջ երեք բոլորովին նոր սերունդ փոխուեցաւ այդ վանքի մէջ, մեռնողների տեղ նորերը գալով: Քարակացաւը այդ կոյսիրից խնայում էր նոցա միայն, որոնք տնտեսա: Լան մասով պարապում էին, ուրեմն որոնք եր թե ե կ ունէին, համեմա-տաբար աւելի ազատ էին, և պ ա ր ա պ մ ա ն ց զ ա ն ա զ ու թիւն ու-ն է ի ն: Այդ կուսանաց վանքը վերջի վերջոյ փակուեցաւ:

Ցարատեն ճնշող կրթերի աղքեցութիւնը սրտի վրայ
—Այս բանին մի օրինակ բերեմ իմ դիտողութիւններից։ Այրկար բացակա-
յալթիւնից յենոյց անցեալ տարի վերադառնալով Աղէքսանդրապոլ՝ մի ա-
միսուլէս այնտեղ մնացի։ Բաւական շատ ծանօթ տներ հրաւիրուելով
բժշկութեան՝ ստէպ ստէպ հանդիպում էի կանանց մէջ ջղական (ներ-
վային) սրտի բարքաման հիւանդութեան։ Այսինքն՝ հիւանդի
որպէս միւս գործարանները, նոյնպէս և սիրտը ոչինչ խանգարմունք չու-
նէին, այն ինչ սիրտը օքուայ մէջ քանի—քանի անդմոմ այնպէս բարա-
խում էր, որ կասէք, թէ նորա մեքենայութիւնը քանդուած լինէր։ 4—5
տարի առաջ, իբրև տեղական բժիշկ, այդպիսի հիւանդութիւն քաղաքի մէջ
ոչ միայն շատ թուով, այլ առանձին ես ամեննեին չէի դիտած։ Հիտեաբար
պէտք էր մէկ կողմից այդպիսի հիւանդութեան, միւս կողմից՝ Աղէքսանդ-
րապոլի վերջին տարինների հանգամանքների մէջ մի որոշեալ առընչու-
թիւն կամ կապակցութիւն տեսնել։ Այս, մշտական վախը, կարսի առաջի-
պաշարումը վերցնելից յետոյ, երբ ամէն օր քանի մի ամիսների ընթաց-
քում սպասում էին Մուխտարի յարձակմանը քաղաքի վրայ և այդ միջոցի
չափազանց գրգռումներով լի հոգեկան կեանքը՝ չէր կարող առանց հետ-
ւանքի մնալ այնտեղացի աւելի թոյլ կազմուածքի տէր կանանց վրայ։
Այս մտքիս հաստատութիւն—ես յիշում էի Սարասբուրգի և Փարիզի պրո-
ֆեսորներից լսածո, թէ այդ քաղաքների վերջի պաշտրումները չափազանց
աւելացրին զանազան տեսակ ջղական հիւանդութիւնք, որ յառաջ տես-
նուած չէին։

Յարատե ծնչող կրքերը և ամբողջ կազմու ածքի վրայ վեասաւ կար ազդեցութիւն կարող են ունենալ: Ուեկել—Պարիզ բժիշկը յիշում է մի 24 տարեկան առողջ կին, որից գատաստանով պահանջում էլին մեծ զումար, այնպէս որ նորա բոլոր կայքերը պիտի ծախուէին: Քանի գատը (պրօցեսը) սկսեց երկարիլ, այնքան, այդ կինը աւելի լզար եց, ախորժակը կորցրեց, երեկոները վրէն տաքութիւն եր գալի, երակազարկը անկանոն և շտապ էր... Գեղօրացք ամենին չէին օգնում, այնպէս որ մահու մերձ էր համարվում: Այս դրութեան մէջ էր կինը, երբ վեշապէս դատը յա- ջողեցաւ յօգուտ իւրի Այդ եղաւ նորա զեղը ու դարմանը, կինը փոքր առ փոքր սկսեց վրայ գալ և շուտով հասաւ կատարեալ առողջութեան:

ԿՐՔԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՈՒՂԵՂԻ ԵՒ ԶԴԵՐԻ ՎՐԱՅ. — Այսպէս,
երբ մենք, Տիկնայք և Տեալք, համոզուեցանք զանազան օրինակներով
թէ ինչ ազդեցութիւն ունին հոգեկան յու գմոնքները կաղծուածքի բու-
սական՝ (աննդական) և շարժողութեան գործարանների վրայ, — էլ ասիւ
կուզէ, թէ որքան ևս առաւել պիտի վնի այդ ազդեցութիւնը նոյն իսկ
ջղային սիստեմայի՝ ուղեղի վրայ, որի ծնունդն է կիրքը: Վերջինս ինչպէս
որ արեան շրջանը փոփոխում է միւս գործարանների մէջ, նոյն ազդեցու-
թիւնը բանեցնում է առաւել ևս իւր արինային երակների վրայ, սոցա

Ահա մի օրինակ ես անմիջական ներդործութեան ուղեղի վրայ: Պրօֆ. Մանասէջինը պատմում է մի զարդացած կնոջ մասին, որ չափազանց պի-լրաւորական խօսք լսելով իւր մօտ մարդու բերանից՝ ափ ա զի ի՝ այսինքն լեզուակապութեան հանդիպեցաւ: Ա. Փ ա զ ի է ն բաւականին անտանելի հիւանդութիւն է, որ ուղեղի որոշեալ մի մասի խանգարմունքից է լինուամ. մարդու ամեն ինչ հասկանում է, առարկաների նշանակութիւնը շատ ան-գամ զիմումը կայ, բայց նոցա անունները բոլորովին մոռացել է: Ոյնպէս որ լինուամ են հիւանդուեր—որոնց երբ դանակը ցոյց կը տաս՝ կարտղ ևն աօել, թէ ինչ բանի համար է այդ իրը, ինչպէս է չինուած, բայց չեն կա-րող ուղղակի անունը գտնել: Միով բանիւ, այսպիսի մի հիւանդ երկար ժամանակով ներկայացնում է այն առողջ մարդու դրութիւնը, որ չափա-զանց կրթի ազդեցութեան տակ մի բան ուղղում է և անունը չէ գտնում և դորա փոխարէն՝ անորոշ «ի քը» «ի ն չ ը» «այն բ ա ն ը» և այլն այսպիսի հնչիւներ է արտասանում:

Այս էլ պէտք է ասել, որ կրքերը երբեմն պղղում են նախ և առաջ ջղերի և ապա ուղեղի վրայ: Շատ անգամ զանազան զգայարանքերի և մարմնի մէջ տարածուած ջղերի խանգարմունքը առ և լի վաղ է նկատուում քան հոգեկան հիւանդութիւնը: Շատ զէպքեր յայտնի են, երբ օրինակ՝ զանազան անհանգստովթեանց, անկրնութեան և կրքերի, չափազանց

գործադրութիւնից՝ ճաշակի և հոտոտելի հայ ջիղերը խանգարուեմեն.
Հիւանդը բոլորովին առողջութեամբ զարմանում է կերակուր-
ներից վատ համեստ առնելով. նա եթէ, օրինակ, ամուրի մարդէ և
խոհանոցում է ուտում, մկում է ուրիշ ուրիշ կերակուրներ պահանջել,
կարծելով, որ իւր սովորական կերակուրները վատ են պատրաստում, միւս
կերակուրներից էլ միենոյն վատ համն ու հոտն առնելով, նա թողնում է
այդ հիւրանոցը և դիմում է այլ հիւրանոցի: Առաջի օրը նոր տպաւորութեան
տակ երեսակայութեան ազդեցութեամբ կերակուրից փարի խչ զահ է մնում:
միւս օրերը այնտեղի կերակուրներից ետ սկսում է առնել նոյն գարշելի
համն ու հոտը: Ակսում է հիւանդը կասկածել իւր թշնամիներից: Չի՞ ի թէ
նոցա գործն է այդ, մտածումէ, ոգոցէ նորա կաշառում են խոհանոցի
ծառաներին, որ իւր կերակուրների մէջ աղտոտ իրեղէնք խառնեն: Այդ
կասկածի ազդեցութեան տակ նա դիմում է երրորդ, չորրորդ և այն խո-
հանոցի: Վերջի վերջոյ ամէն տեղ մի և նոյն վատ համն ու հոտն զգալով
իւր կերակուրների մէջ, նա լիսկամատար համոզմունք է կազմում, որ իւր
թշնամիքը իրան հալածում են և ուզում են վնասելու: Այս միաքը՝ վեր-
ջապէս՝ յուսահատուած հիւանդը յայտնում է ոստիկանութեան, և պաշտ,
պանութիւն խնդրում, այս կերպ բացվում է նորա խելագարութիւնը, թէն-
ճիշդ քննած, գետ նա հոգեկան հիւանդ չէ, այլ ջղային հիւանդութիւն ունի:
որովհետեւ ուղեղի դատողութիւնը հետեղական է կամ ճիշդ տրամաբանա-
կան: Եթէ մարդ միշտ վատ հոտեր է առնում կերակուրներից և չփառէ,
թէ այդ բանը իւր հոտոտելեաց փոփոխութիւնից է, բնականաբար մի որ
և է այլ պատճառ պիտի գտնի իբրև մեկնութիւն իւր սիմալ տպաւորու-
թեանց....

Այսպիսի մի հիւանդ այս տարի երեք ամիս իմ ղիտողութեան տակն էր. Նա այնտեղն էր հասել, որ միմիայն իւր ձեռով շինած խորովածը կարող էր ուտել և իւր գրած ինքնաեւից կարող էր թէյի համար ջուր վերցնել, բացի այդ նորա չօշափելեաց մորթային ջղերն ևս չափազանց զգայուն էին դառել, այնպէս որ շապիկի և հագուստի սեղմելն անդամ նորա մորթին ցաւ էր պատճառում. Հիւանդը իւր ագլականների մօտ բնակելով և նոցանից կասկածելով՝ սկսել էր մտածել. որ նորա սպիտակաշորը լուանալիս թոյն են խառնում լուացքի ջրին, որպէս զի աշապիկից թունաւորուին.. Նա տանում է և ոստիկանութեան միջոցով շապիկը քիմիական քննութեան է ուզում ենթարկել տալ....

Միւս այդ տեսակ հիւանդների տեսանելեաց կամ չօշափելեաց ջիղը փոփոխութեանց ենթարկուելով զանազան չեղած և անկարելի պատկերներ են նոցա երեւմ, և կամ գարմանալի ձայներ լավում. — որոնց մնկնութիւնը ամէն հիւանդ իւր զարգացման և իւր բոպէական կրքերի ազդեցութեան համեմատ իւր ուղեղի մէջ գտնում է... մէկը սատանաներին է տալիս այդ ձայները, միւսը հրեշտակներին, երրորդ իւր սիրեկանին, չորրորդը թշնամուն և այլն և այն. Այս սիսակ երեսիներն են, որ հ ա լ ի ւ ս ի ն ա ս ի օն

Են կոչվում: Յթէ այդ հալիւսինասիէք» երկար ժամանակ՝ կը կը նվազվում են և տեսում են՝ ջղերը հանգստացնող դեղերը չեն օգնում կը նշանակէ, որ ուղեղի մէջ ևս փոփախութիւնք սկսուել են. Միայլ եղրահացութիւնները դառնում են ձիւանդ ուղեղի բնական արտադրութիւնը. Այստեղ արդէն կարելի է ասել՝ «մարդը հոգով հիւանդէ»...).

Այդպիսի մի հւանգ վիէննայի Հօգեբուժական կլինիկում⁽⁴⁾ անդադար կրկնում էր, երբ նորան հարցեր էի առաջարկում, որ նա մեռ ած է, դեւեզմանից նոր ան դուրս և ենթարկու այժմ նորա միայն հողին աշխարհիս երեսին պատում է»։ Եւ ինչ, իրավի իւր մարմնի ջղերից նա ոչ մի տպաւորութիւն չէր առնում, թէկուզ այրվէր մորթը, թէ կուզ ծակվէր, թէ կուզ կտրվէր։ Տեսէք ուրեմն թէ խելազարական մոքերն ևս որքան մեծ կապ ունին ուղեղի մէջ ստացած տպաւորութեանց հետ...»

Որպէս ջղային դրութեան նոյնպէս և կազմուածքի այս և այն գործարանի իւանգարմունքը փոխաղարձութար մեծ ազգեցութիւն կարող են ունենալ հոգեկան գործողութեանց վերայ. Չուզենալով այլ ևս ծանրաբեռնել ձեր յիշողութիւնը օրինակներով, ես կ'ակնարկեմ այստեղ միայն սեռական գործարանների անկանոնութեանցը. Ո՞վ չգիտէ ձեզանից թէ այդ անկանոնութիւնքը թոյլ բնաւորութիւններին հասցըել են վերջ ի վերջոյ ծանր ջղային հիւանդութեանց (մէջքի թուլութեան, հիստերիայի և այլն) և նոյն իսկ հոգեկան հիւանդութեանց (մելանքոյիի և ապցութեան):

Այսքան օրինակներ բերելուց յետոյ՝ ես կ'ուզեմ այժմ մատնացոյց լինել մի քանի գործնական եղանացութիւնների վերայ, մնացած շատ մարդ թողնելով ձեր սեփական կշռադատութեան.

Այսպիսի օրինակներից կարող են օգտուել ձեզանից ամէն մէկը լիակատար համոզուելով, թէ զանազան տեսակ կրքերը ինչպիսի միծ ազդեցութիւն ունին առողջ մարդու կազմուածքի վերայ, հասկանալի է թէ այդ ազդեցութիւնը կրկին և կրկին զօրեղ պիտի լինի հիւանդների վրայ թւրեմն՝ հիւանդին շրջապատողք շատ և շատ զգոյշ պիտի լինին՝ նորան չափազանց ուրախացուցիչ, գրգռիչ կամ վրդովոլ լուրեր հաղորդելիս, շատ զգոյշ պիտի լինին իւրեանց անտեղի ցաւակցութիւնները և հաւաչանքները ցոյց տալու: Եթէ ձեզանից մէկին, որ բոլորովին առողջ է, հարեաններ փորձի կամ կատակի համար սկսեն զարմացական դէֆքով հարցնել, թէ այդ ինչ է, սաստիկ գունաթթափուած էք, դեղնած էք և այլն. — լսելու անսպասելի կերպով այսպիսի հարցմունք, ձեզանից իւրաքանչիւրը, ասուեմ, իւր առողջ տեղովը, աներկրայ եմ, պիտի իւրեան թոյլ և հիւան զգայ. . . Ուրեմն ինչ կը լինի հիւանդի զրութիւնը, եթէ նորան զանազա

1) Հիւանդանացումն իրան պահպանի պահական պահպանը ըստ

կասկածների և վախերի ազդեցութեան տակ ձգենք։ Անդուր և անխոհեմ ազգականների և ծանօթների աւելորդ այցելութիւնները, որ երբեմն շատ անտեղի են յինում միայն աշամթիս պահանջմամբ—մասսակար սովորութիւն է։ այսինչ կան հիւանդներ, որոնց համար մտերիմ բարեկամաց երթեւեկը—մեծ սփոփանք է, Մանաւանդ հիւանդի առողջանալու ժամանակ հաւաքուելը թեթև և չճանձրացնող խաղեր խաղալը միասին հիւանդին շատ օգտաւէտ է վլսում։ Այս մտքերը ինձ յիշեցնում են մեր կովկասի մի քանի անքաղաքակիրթ տեղերի սովորութիւնը, որ հիւանդների մօտ շուտ—շուտ «աշուղներ» են բերում, և նուաղածութեամբ,—ինչ էք կարծում—երբեմն բարերար ազգեցութիւն գործում հիւանդութեան լաւ ընթացքի վրայ, Ուրեմն սոքա բնութեան ցուցումներից աւելի են օգտուում, քան մենք քաղաքների անտեղի սովորութիւններով։ . . .

Բժշկականութիւնն ես առաւել պիտի օգտուի վերը բերած օրինակները և ուրիշ դոցա նման հազարաւոր դէպերը փոքր առ փոքր մշակելով, մասրամասն քննութեանց և փորձերի նիւթ շինելով և դորանից գործնական կանոններ դուրս բերելով։

Այսպիսի հետազոտութիւնների օգտակար ազգեցութիւնը պիտի երեխ նախ և առաջ մեր բժշկական հաստատութիւնների վրայ, Ի՞նչ տեսակ են այդմ հիւանդանոցների մնծ մասի ներքին կազմակերպութիւնը և կարգերը—իրար մօտ շարուած մի և նոյն կարգի հիւանդներ՝ ծանր ու թեթև աստիճաններով.—մէկը նոցանից հոգեվարքի մէջ՝ միւսները զիտեն, որ իրանք ևս նոյն հիւանդութիւնն են կրում, հիւանդութեան անունները անկողնի զլիսին ցցուած, (թէե այդ մի ծոտար լեզուով լինի) և այլ այսպիսի հանգամանքեր, որոնք հիւանդի բոլոր ուշադրութիւնը ցաւալի կերպով իւր տկարութեան վրայ կենտրոնացնում են։ Առողջացող հիւանդների համար մասնաւոր դահլիճում յարմարաւոր զբաղմունքներ, խաղեր (բելիարդ, նարդի, թղթախաղ և այլն) չեն սահմանուած, յարմարաւոր ընթերցարաններ և ճեմելու պարտէզներ հարիւրից մի հիւանդանոցն հազիւ է ունենում, որովհետեւ դոքա դեռ ևս ամենակարեւոր չեն համարվում, որովհետեւ լիակատար համոզմունք չէ դառել, թէ չափազանց հոգեկան ձանձրոյթը որքան վնաս է բերում առողջութեան։ Ես չեմ յիշում ուրիշ այլ սարսափելի զանցառութիւններ՝ հիւանդի վրայ ճնշող ազգեցութիւններ, որ փոքր առ փոքր պիտի վերանան մեր հիւանդանոցներից։ . . .

Նոյն իսկ մեր բժշկական համալսարաններում դեռ շատ սակաւ ու շաղրութիւն են դարձնում մեր քննած հարցերին։ Երեակայեցէք, օրինակ, մի հիւանդ կնոջ դրութիւն, որի սեռական անդամներում մի արիւնահեղ անդամահարութիւն պիտի անէ ուսուցիչ վիրաբոյթը։ Դողոջուն հիւանդը բերվում է լսարանը (առողիտօրիա, հարիւրաւոր աշքեր հիւանդի վրայ են դառնում, միւս կողմից պատրաստվում են առանձին սեղանի վերայ զանազան տեսակ զանակներ, սրածայր կարթեր, միով բանիւ կտրող։ այրող գործիք-

ներ—այդ բոլորը բայց աչքով հիւանդը տեսնում է. շատ անգամ պրօֆեսորի պատմածն ես երկար ու բարակ լսում է, իւր չնակացած տեղերը ովկիտէ թէ երեակայութեամբ ինչ կերպ լրացնում... սարւակի տպաւութիւնն... լաւ է, որ համալսարանական քաղաքների ժողովուրդը փոքր ինչ սովորած է այդ բաներին... Ես միակ մի վիրաբոյթ (Այսպիգի պրօֆեսօր Տիրու) տեսայ, որ ուշադրութիւն էր դարձրել, ո զիտէ ինչ ծանր փորձերից յետոյ՝ հոգեկան ազգեցութեանց նախակութեանը։ Նա իր հիւանդի համաձայնութիւնը առնելով՝ որ կտրատուի այս կամ այն հիւանդ մասը. օպերացիի օրը չնշանակած՝ հիւանդին յանկարծ յայտնում էր, թէ նորան քնն ել ու է անկողնի մէջ, էդ պատճառաւ քլորօֆորմ (քնացնող նիւթ) է տրվում, Եւ այդ կերպ երբ հիւանդը բոլորովին քնացած, անըգգայացած էր, ո որ բերվում էր լսարանը ուր և օպերացիէն կատարվում առանց որեէ հոգեկան յուզմանց հիւանդի կողմից— ահա օրինակելի յարաբերութիւն դէպի հիւանդը... Վերջապէս ինչ երկարեմ, դուք ամենքդ լսեցիք—որ միայն կասկածը լուսական դեղ է տրուած՝ մարդուս ուսումաքը յետ է ած ել տալի, կան օրինակներ, որ լուծողական դեղի հոտը միայն մտաբերելիս մարդ փորացաւ է ստացել. սովորական հացի միջուկից շինած հապերը տրուելով իբրև լուծուղական՝ մարդու ստոմաքը բաց են արել. —Յայտնի է, թէ հոգեկան մխիթարութիւն ունի կազմուածքի վրայ, ինչպէս միւս կազմուրիչ և արեան շրջանը արագացնող դեղ եր (երկաթը, զինին և այլն): Այս և սոցա նման անհամար փաստեր իմանալուց յետոյ չէ կարելի չհամոզուել, որ բայց բուսական և քիմիական նիւթերի դեղօրայքը, բացի մեր սովորական դեղաբանները (Փարմասինները) կայ և մի այլ դեղար առ սորին գեռ սակաւ ծանօթ ենք, այդ մարդուս հոգ եկան աշխար հան, որից անշուշտ գիտեն օգուտ քաղել հմուտ բժիշկները։

Սեծ և երեկոի բժիշկների ոյժը ի շարս այլ հանգամանքների (անընդհատ փորձ, տոկուն աշխատութիւն և զիտողուի իւն) ահա այն բանի մէջն է նա, որ նորա, բայցի քիմիական դեղերը, գիտեն իւրեանց հիւանդնիրի վրայ ազգեկ հոգեկան դեղերով։ Այս բանին շատ օգուտ է և այն հաւատը, որով զիմում են հիւանդները մեծանուն և համբաւաւոր բժիշկներին։ Այս հաւատի վրայ է հիմնուած, որ երեկոն շառլաւատ առ եր, իւստերանին, զանազան տգետ խաւար, օջառահնաներ, հարիւրիմներն ևս ժամանակաւոր կերպով յաջողագիւն են ունենում բժշկութեան մէջ։ Ժամանակաւոր կերպով, ասում եմ, որովհետեւ շառլաւատները չիմանալով գուշակել հիւանդութեան ընթացքը հակասում են իրողութեանց և նոցա խարեալութիւնը այսօր չէ, վաղը՝ բացվում է։ Միմիայն իւստերի զիտութիւն ոյժն է և չնորհը՝ նախատես և առ կատար կարծիքով ամէնքս, իմ կարծիքով, զգոյշ պիտի լինինք ու լսերի և ուխտազնացութեան դէմ չափազանց միակողմանի յարձակման մունքում

Խօսքերս հաւատի ազգեցութեան գալով և հաւատի նշանակութիւնը պարզ ճանաչելով մինք ամէնքս, իմ կարծիքով, զգոյշ պիտի լինինք ու լսերի և ուխտազնացութեան դէմ չափազանց միակողմանի յարձակման մունքում

անելու և ամէն դէպրում հեգնելու։ Համկացնել ժողովրդին անտեղի ուիթագնացութեան վասակար հետևանքները—պարտք է, Երբ՝ օրինակ՝ ջերմութեան հետ դոլձարանաց բորբոքում ունեցող հիւանդներ, որոնց գեղը զիսաւորապէս հանգիստն է, մեր վատ ճանապարհներով քանի—քանի վերստ հեռաւորութեամբ քաշ են գալի ուխտագնացութեան, անշուշտ վաս վում են չարաչար։ Սակայն չպէտք է մուտանանք և այն, որ յարատե, սիրտ և հոգի ճնշող ազդեցութիւնների տակ յառաջ եկած հիւանդութիւններ, հիստերիկական քաշուածութիւն (կօնտրակտուր) և անդամալուծութիւնները երբեմնապէս բժշկուել են մի ջերմուանդ ուխտագնացութեան ժամանակ, այդ իրողութիւնն է։ Իրողութիւնը չի կարելի ուրանալ, պէտք է միայն ավաստել նորա ծիչդ մեկնութիւնը գտնել. . . .

Քանի որ մենք չենք տարածել մեր բոլոր գաւառներում
ժողովրդի լիակատար հաւատը վայելող բժիշներ—անշուշտ իրաւունք չու-
նինք ժողովրդին՝ զրկել իւր առողջ ապահովութեան միակ հնարից՝
ուխտագնացութիւնից։ Ցանկալի է, ի հարկէ, որ միմիայն յարմարաւը
ուխտատեղիքը իսկական առողջապահական հիմանով վրայ պայծառացուէին
և ոչ մի կամ միւս մնութիւնապաշտ և տգէտ վանականի կամքին թողնել
երենելի ուխտատեղիների բարեկարգութիւնը. . . . :

II

Բ ովանդակութիւնն.—Քանի մի հարիսներ՝ կրթերի արտայաց-
տութիւնը մեղմացնելու և նոցա վտանգաւոր զօրութիւնը զսպելու 1) ժա-
ռանգականութեան օբէնքի, 2) բարոյական կրթութեան և 3) զարգացման
միջոցներով:

Տիկնայք և տեսարք,

Անցեալ զրոյցիս մէջ զանազան օրինակներով աշխատեցի ակնյայտնի ապացուցանել թէ՝ սաստիկ կրքերը ինչպիսի սարսափելի աղղեցութիւն գործում մարդուս կազմուածքի, մարդուս առողջութեան վերայ։ Մենք տեսանք չափազանց ուրախութիւնից, վախից, բարկութիւնից, նախանձից՝ զանազան տեսակ հիւանդութիւններ—անդամալուծութիւն, լեզուակապութիւն, զեղնութուն, թռփերի, սրտի, աղեաց և միւս գործարանների հիւանդութիւններ, մենք տեսանք վերջապէս՝ կրքերից յառաջացած նոյն իսկ խելագարութիւն և շատ անդամ—մահ։

Իմ բերածո օրինակները սակաւաթիւ էին, բայց ձեզանից իւրաքանչիւրը մեր կեանքի մէջ հարիւրաւոր այլ օրինակներ կարող է մտաբերել. իմ զրոյցիս նպատակն էր ձեր ուշազրութիւնը այդ հարցի վերայ դարձնել և դանագան այդ տեսակ դէպքերի նշանակութիւնը և կապը ձեզ ըստ չափու պոյց տալ:

Անցեալ անգտմի պատմածս դէպքերը և ձեր իւրաքանչիւրի պիտած
համանման օրինակները մտարերելով՝ շատերի գլխի մէջ բնականաբար
պիտի քաջէին այսպիսի հարցեր. Առ ու դրան յանձնաբար
մուտք ունարակիուու դուռածքի պարագ մի մաս ընկայ պարզ յանձնաբար
մէջ անողել լուսայ բայց այս պատմաթիւի մ առաջաւ ու
գիտականար մասնեց զրա հիմնացարականի ուրի տեղեւ ուն ուն
ցի ՅԵՒԶԻՑ Երանեալ ՄիեկնոՅՆ ՀՈՊԵԿԱՆ ՅՈՒԶՈՒՄԸ, միեն ոյն
բա ս տիկ վախը, բա ս կութիւն ըմեայլն, ՄԵԿԻ ԱՌՈՂ ՉՈՒԹԵԱՆԸ
ՎՆԱՍՈՒՄԸ, ՄԻՒՄԻՆ ՈՇ» անդամականաց պատմական դրվագ նախան
ան ԽԱՐԳ կախումն առնի մարդուս կազմուածքի, ամանաւանդուուզիս
ջղային պրութեան ամրակամ կազմութիւնից կամ դիմացկ անու-
թիւնից մի և քրուատայ վրա բան զբան վայր է պար պիտի
մասնակազմուածքի կամ նորա գիսաւոր մասերի այդ դիմացկանութիւնը
ամենիդ յայտնի է նոր ժառանգ գութեան գութեան ամր կըստացուի: Անոյն ունի
յայտնա իբ հօգեկան զդրդում առողջ կազմուածքի ուղեղի մէջ կարող է
անցիենալ առանց շատ վտանգաւոր հետեւնքների այն ինչ մի թոյլ կադ-
մուուծք վասալում է անբութելի կերպով: Յայտնի է թէ՝ կանանց սեռը՝
օրինակ՝ շատ աղքերի մէջ բնական թէ պատմական պատճառներով՝ ա-
ւելի թոյլ, աւելի քնքոյց ջղային կազմուածք ունի քան այր մարդիկ, և
հոգեկան յուզումները առաջինների վերայ աւելի արագ և աւելի զօրեղ
աղղեցութիւն ունին: Շատ հաւանական է թէ՝ մասամբ այս է պատճառը,
որ քաղաքակրթեալ աղքերի տղամարդիկ իւրեանց կանանց սեռի հետ,
գոնեա արտաքին յարաբերութիւնն մէջ, աւելի զգոյց և աւելի քնքոյց
փարուել սովորած են:

Յայտնի է նոյնպէս թէ՝ հոգեկան գրգռումները քաղաքակրթեալ ցեղերի մէջ աւելի վտանգաւոր ազդեցութիւնք ունին, քան վայրենի կամ վրանաբնակ ժողովրդոց մէջ։ Դորանից չափաք է եղրակացնել, թէ կրքերը վերջինների մէջ աւելի թեթև են կամ աւելի մեղմ, ընդհակառակը՝ առաւել սաստիկ և առաւել սարսափելի են, բայց այդ տեսակ ժողովրդոց կազմուածքը քնքոյց և փխուր չկներով՝ կրքերի վաստակար աղեցաւթիւնը նոցա վրայ այնքան նկատելի չի մնում, որքան քաղաքակրթեալ ժողովրդոց մէջ։

Վեր առևիճը՝ օրինակ՝ մեր հարեան՝ (Սրբագածի ստորագիւղի քիւթերին) զեղ բրւլորիդ յայտնի է, որ նոքա նորածին երեխին ու զզակի սառը ջրապ լողացնում են, այդպիսի բարբարոս սովորութիւնից նոցա մանուկների բա ւական մասը վաղաժամ մեռանում է, բայց որոնք որ այդ առաջի զար հուրելի փորձին դիմացան և ապրեցին, այնպիսի զօրեզ կազմուածքի տէլ ին վիճակ, որ ոչ միայն վտանգի չեն ենթարկվում իրանց զօրաւոր և անսահմա կրքերից, այլև արիւնենութեան կրքերով ահաւզող են ձգում հարեան միւս աւելի քաղաքակիրթ ժողովրդոց մէջ։ Քիւթերի ցեղը մեր կաղմե բրւլ նշանաբելի կերպով պակասում է + այդ ուրիշ հարցէ, այդ նորա և մե

Նիատում և նոյն փոյթը չէ, բայց մեացողները և ապրողները դարմանալի ցաղթանդամներ, և երկարակեաց են; ոչ մի խռով որդիշանչոց մասնաւունք

Քաղաքակրթեալ ազգերի մէջ ևն՝ այժմ նոքա են քաջակազմը, որ
իրանց երկրի, իրանց ամէն մի քաղաքի ընդհանուր առողջապահութեան
են հետեւմ և Փիզիկապէս աւելի զօրաւոր սերունդ յառաջ բերում: Այն
ինչ մեր հայերիս պէս կիսաքաղաքակրթ ազգը այժմեան պայմանների
մէջ օրէցօր կազմուածքով մանրանում է, որովհետեւ մեզանից ամէն մէկը
միմիայն իւր առողջութեան մասին է մտածում, իսկ իւր քաղաքի, իւր
բնակած երկրի սարսափելի հակառողջական պայմանները հեռացնելու չի
աշխատում և սխալիվում է չչարաչար. վասն զի չնայելով իւր փարթամ սե-
զանին, զինուն և արագին, ուրախ կեանքին—իւր սերունդը այնու ամե-
նայնիւ դուրս է գալի աւելի թոյլ, աւելի վատառողջ և մի ամենաթեթե
վտանգի չգիմացող՝ թոյլ: Իրանց քաղաքի անհամար աղտեղութիւննե-
րից, իրանց երկրի հակառողջական պայմաններից (Տահիճներ և այն): Առաջ
քաղաքական մեր վերը բերած դատողութիւններից կարելի է մակարերել
որ եթէ կամենում ենք ունենալ կրքերի ազդեցութեանց դիմադրող սերունդ,
նախ և յառաջ՝ պէտք է մենք մեր ընդհանուր առողջապահական պայման-
ներին լաւ ուշք դարձնենք և առողջակազմ արանց և կանանց ամուսնու-
թիւններով մեր ժառանգական քաջական մութիւնը վերականգ-
նենք: Հայու և բարա Հայու բայց դամական գործություն մատնու-
թառապար և այս պատճեն ներ է մայթաւում անց մայթ մայթուցքքա-
ռու գույ ըմանաց ըմանաց բյութիւնը դուրս դամական գործություն ու
դամական գործություն առաջանաւ առաջանաւ առաջանաւ առաջանաւ:

Այս հարցն ես մեկնվում է ժառանգականութեան օրէնքով։ Բնագլաները և բնախօս—հոգեբանները այժմ միաբերան ընդունում են, թէ ինչպէս երեսմն հոգեկան այս կամ այն յատկութիւնները, զանազան ձիքերը, նոյնագէս և այս կամ այն տեսղական հոգեկան դրութիւնը կարող են ջղերի միջոցաւ ժառանգաբար և սերունդէ սերունդ հազորդուել։

Այս կերպ՝ բնութիւնից մարդուս կազմուածքը տրամադրուած է վի-նում տեսակ տեսակ կրքերի առաւել կամ սակաւ ենթարկվելու, մինը մե-զանից աւելի բարկացուտ է կամ տիրութեան ենթակայ, միւսը աւելի ու-րախ և զուարթ է անցկացնում իւր բոլոր կեանքը և այն. Կրքերի վերա-բերութեամբ ահա այս զանազան չղային տրամադրութիւններն են, որ մենք տեմ պեր ամեն տենք կոչում (խառնուածք). Ասածներիցս պարզ երեսում է, թէ որքան զանազան են մարդկային անձնաւորութիւնները իւ-րեանց արտաքին տեսքով և կազմուածքով, այնքան և զանազան են տեմ-պերամենաները. Սակայն ինչպէս որ գեռ հին ժամանակներից փիլիսո-փանները և բնագէտները նկատելով մարդուս արտաքին տեսքերում ընդ-

Հասուր յատկութիւններ՝ բաժանել են մարդկային սեռը զանազան ցեղերի, նոյնպէս և մարդկային տեմպերամենուր բաժանել են գլխաւոր տեսակների. 1) արիւնային (սանգվինիկ), 2) աւիշային (ֆլէգմատիկ), 3) մազձային (խօլերիկ) և 4) սևամազձային (մելանխոլիկ). Այս անունները չի մոռած են հին ժամանակների միալ գաղափարների վերայ կրպերի ծննդատեղոյ մասին, սակայն այս բաժանման բուն նշանակութիւնները չեն կարելի այժմու էլ չհամարել ամենածիշդ դիտողութեանց պատուղ. Թոյլ առուէք ինձ, մի փոքր աւելի այստեղ ձեր ուշադրութիւնը կանգնացնել տեմպերամենների վրայ, որպէս զի մեր յետազայ զրոյցի մէջ կրկնութեան աեղիք ըինդ:

Արիւնային և աւշային տեմպերամենսերի մէջ տիրապետում են աւելի հաճութեան, ուրախութեան, բաւականութեան վերաբերեալ կրքերը, այդ բնաւորութիւնների մէջ կրքերը աւելի թէ թէ, աւելի հեշտ են անցկենում, ծանր հետեանքներ չթողնելով: — Սոքա աւելի օպտիմիստ են կեանքի մէջ, այսինքն՝ մարդկանց և իրողութեանց աւելի լաւ կողմերը նկատելու տրամադրիւ: Ամ ինչ՝ մադային և մելքամազային բնաւորութեանց մէջ ամէն մի կիրք կամ բաղձանք աւելի զօրեղ և սաստիկ կերպով շարժում են և թնդացնում բոլոր հոգեկան զրութիւնը, այդ բնաւորութիւնները աւելի ենթարկուած են ահաճութեան, բարկութեան և այլ այս տեսակ կրքերի ազդեցութեան: Սոքա աւելի պեսսիմիստ են կեանքի մէջ, այսինքն՝ կեանքի աւելի վատ

կողմերը միշտ տրամադրիր են տեսնելու և անուշադիր լաւ կողմերին,
Այս չորս տեսակ՝ բնաւորութեանց զանազանութիւնը աւելի պարզե-
լու համար՝ նրանց դասաւորենք ուրիշ կարգով, արիւն ային և մադ-
ձային մէկ կողմից, ու և մադձային և աւիշայինը միւս կող-
մից:

Առաջինները (արինայինը և մաղձայինը) յուղվում կամ զրգովում են աւելի ներկայի վերաբերեալ զգացումներով և կրքերով. երկրորդները՝ մելամաղձային և ափչային) աւելի ապագային և անցեալին վերաբերեալ կրքերով:

Արխանային և մազգային բնաւորութիւնները շատ շուտով լորդութիւն
են ներկայ տպաւորութիւնների ազգեցութեան տակ, մինը ուրախութեան
յափշտակութիւններով, միւսը բարկութեան և այն։ Մելամաղ ձայնն
և աւելացին բնաւորութիւնները այդքան դիւրաշարժ չեն կըր-
քերի մէջ, ուստի և աւելի ուշ գործի կաշող և աւելի ուշ կամ սակաւ յափըշ
տակուող։

Մելամազձային բնաւորութիւնը այն զգացմունքներին և կրքի բին է ենթարկուած, որոնք ապագան անմիտի՞ւար և տիսուր են ներկայաց նում, այս պատճառաւ այդ տեսակ բնաւորութիւնը միշտ աւելի հեռու է մտածում, հեռաւոր ապագայի հոգսերը տանում, և երբեք բռնական չեն ներկայով:

Աւիշային բնաւորութիւնը մի անգամ անցեալից ունեցած կրքերը երկար տարիներ իւր մէջ պահում է և հաստատ մնում մէկ անգամ ընդունած իւր որոշումներին:

Վաղուց նոյնպէս նկատուած է, որ ոչ միայն անհատներ, այլև ամբողջ ազգեր և մարդկային խմբեր այս կամ այն միակերպ ազգեցութեանց տակ, նոյնպէս ներկայացնում են աւելի կամ պակաս այս կամ այն տեմպերամենտը։ Օրինակ՝ գերմանացւոց համար սովորաբար ասվում է, որ աւելի փեղմատիկ ժողովուրդ են. Գաղղիացւոց համար՝ աւելի արիւնային։ Մեր Հայերիս համար կարելի է ասել, որ մեծամասնութիւնը աւելի մելամաղձային և մաղձային բնաւորութիւն ունի, գուցէ՝ որովհետեւ պատմական տիսուր ազգեցութեանց տակ միշտ մեր մաղձը խառնուած է եղել. այդ պատճառաւ սաստիկ կասկածութ ենք և ապագայի յոյսերով սակաւ ենք միախթարվում և ոգեսորվում։ Բայց նոյն իսկ Հայերիս մէջ կարելի է ցոյց տալ խմբեր, որ այլ պայմանների տակ ուրիշ տեմպերամենտ են սկսել ներկայացնել. Օրինակ Յիֆլիսցիք, կարելի է ասել, աւելի արիւնային են, Պօլսեցիք աւելի արիւնային և մաղձային։ Այս չափս բաւական է տեմպերամենտի մասին լնդհանրապէս։

Արիւնային (սանգվինիկ) տեմպերամենտպէտքէ ունանայ մարդ սովորական կեանքի մանը պահպատկանութեանց, ուրախութեանց, հաճութեանց, և ուժանութեանց մէջ, մելամազային (մելանքօլիկ) պիտի լինի իւրկեանքի ծանը եղածուար քայլերի մէջ մազային (քօլերիկ) այն հարցերի մէջ, երբ մարդ ձշմարտութեան և արդարութեան պաշտպանէ հանդիսանում, աւիշային (փլեզմատիկ) երբ մի անգամ զգացած որոշածը կեանքի մէջ պիտի յամառութեամբ յառաջ տանի երագործէ:

Ահա բնաւորութեան այս տեսակ գեղեցիկ խառնուածքն է, որ կոչվում է «ամբողջ» և լիակատար բնաւորութիւնը:

Մի քանի պատմաբան փիլիսոփաների կարծիքն է թէ՝ այս տեսակ կատարեալ խառնուածքը, այս արդինաւոր բնաւորութիւնքը, կարող են աւելի շատ թուով յառաջ գալ և զարգանալ քաղաքական ազատութիւն վա-

յելող ազգերի մէջ։ Մեծ ուշք պէտք է դարձնել միւս կողմից, որ ամուս-նական բնական պայմանների միջոցով կարելի է ևս ծայրա-կան բնական պայմանները սերնդի մէջ մասամբ բարեխառնութեան կատարել է պատճառը, որ շատ անգամ, կասէք բնագդմամբ, բարկացութ այր մարդիկը առաւել համակրութիւն են ցոյց տալի աւելի հանդարտաքարոյ և ավշային բնաւորութեան տէր հարսնացուի։ Արինա-յին սանգվիճները, որ անհոգ բնաւորութիւն ունին—աւելի մելանքօիկ-ների, որ չափազանց հոգացող են և այն։

Գ. ԿՐՔԵՐԸ կամոնաւորելու և նոցա վեսասակար աղջեցութիւնները մեղմացնելու համար բաւականին զօրաւոր միջոցներ յենք պիտի որոնենք նաև կը թութեան և մտաւոր դարցաց ման մէջ։

Յայտնի է թէ կրթութեան և զարգացման զործը մեծ կախումն ունի մարդուս ուշադրութեան վարժութիւնից, որ կամքի հետ սերտ կապ ունի.

Ուշադրութիւնը այն հոգեկան ոյժն է, որով մենք կարողանում ենք կենտրոնացնել մեր զիտակցութիւնը մի որոշեալ մտքի կամ առարկայի և նորա բոլոր մանրամատնութեանց վրայ, մի որոշեալ զգացու մի վրայ. որով զգացումը կարող է զօրանալ մեր հոգու մէջ մինչի կրքի աստիճան. իսկ միւսները ընդհակառակը կ' անհետանան. Այլ խօսքերով—կենտրոնացնելով ուշադրութիւն՝ օրինակ՝ մի զգացումի վրայ, զարթեցնում ենք վերջինս. իսկ ուշադրութիւն չդարձնելով մենք քնացնում ենք այդ զգացումը:

Յայտնի է նոյնպէս, որ քանի մարդ շատ իրական մտաւոր պաշար է ստանում, այնքան առաւել վարժուում է նորա ուշադրութիւնը, այնքան առաւել մարդս ընդունակ է կառավարել իւր զգացումները և կրթեցն

Եւ իրաւի ում չէ պատահել բոլոր ուշադրութեամբ մի կարեսոր գործ կամ փորձ կատարելիս մոռացութեան տալ զանազան իւր մարմնի զզացումները նոյն իսկ ամենազօրաւոր զզացումը՝ քաղցը, Մի հետաքրքրական վիպասանութիւն կարդալիս ում չէ պատահել բոլորովին չզգալ անկանոն նստուածքից պատճառած անյարմարութիւնքը և ցաւերը, մինչև որ ոտքի կամ բազկի չափազանց թմրիլը սթափեցրել է վերջապէս յափշտակեալ ընթերցումից—ում չէ պատահել վերջապէս քաղց չզգալ ամբողջ օր՝ այս կամ այն ընթերցումը կամ կարեսոր գործը վերջացնելու համար:

Հաղարաւոր փաստեր կան, որ զօրեղ ուշադրութեան տէր մարդիկ շատ անգամ թեթև հիւանդութեանց խսկ յազթել են՝ իւրեանց ուշադրութիւնը նուիրելով ամենահարկաւոր դործերի։ Եւ ընդհակառակը, նոքա, որ իւրեանց բոլոր ուշադրութիւնը զբաղեցնում են իւրեանց հիւանդութեան երևոյթների վրայ, օրէ ցօր սաստկացրել են հիւանդութիւնը։ Ես մի հիւանդ գիտեմ, որ բաւականին բորբնքվող մաղձային ընաւորութիւն ունենալով՝ զանազան վախերի ազգեցութեան տակ, սրտի ջղային բաբասնաման հիւանդութեան է ենթարկուած։ Սիրտը որ քննես, նորա մեքենաւութիւնը

բոլորովին առողջ է և անխափան, բայց հարիւրաւոր բժիշկների ցոյց առաջ իւր սիրտը՝ մէկից միւսից զանազան բառեր է լսել—«անեվրիզմ» աչի պերտուֆիք և այլն, նյուղ պատճառով չափազանց անհանգիստ է, ամէն օրիւր սրտի պայթելուն սպասում է, երբ նորա սիրտը կանոնաւոր գործում է և ամենեին պայթելու տեղիք չունի.... Այդ հիւանդը սովորել է աջ ձեռքով իւր սրտի արոփը շօշափելու. և յայտնի է թէ՝ երբ առանձին ուշադրութիւն դարձնում ենք սրտի վրայ, նա աւելի արագ, երբեմն անկանոն իսկ զարկում է.... հիւանդս վախեցած ուղարկում է մի կամ միւս բժիշկի յետեց և այս կերպ՝ անվերջ տանջում թէ իւրեան և թէ իւր գերգաստանին.... Այդ պարսի իսկական հիւանդութիւնն է ստոմաքի և աղեաց հնացած հարբուխ կերակրի անչափաւորութիւնից յառաջ եկած, այդ պատճառից է նորա սրտի փոքր ինչ զօրել զարկելու. Ստոմաքի հարբուխը առողջացնող հանքային ջրերը մի գեղեցիկ ճանապարհութիւն լաւ ընկերութեան մէջ, որ ուշադրութիւնը զբաղուի նորանոր տպաւորութիւններով, շատ անգամ բաւական են փրկելու հիւանդին կարծեցեալ սրտի տկարութիւններից:

Մի գաղղիացի բժշկութեան պլոֆեսօր, որ սրտի հիւանդութիւնների մասին դասախոսութիւններ էր կարդում, սովորութիւն ունէր միշտ իւր բազկերակի և սրտի զարկը շօշափել: Փոքր առ փոքր նա սկսեց նկատել իւր մէջ սրտի հիւանդութիւն, որ օրէ ցօր աւելանում էր. եկաւ ֆարիզ խորհրդակցելու այն ժամանակ ամենաերեսի Տրուսսո բժշկի հետ. Տրուսսո նորա սիրտը մանրամասնօրէն քննելուց և հիւանդութիւն չգտնելուց յետոյ խոստացաւ նորան շուտով առողջացնել, եթէ խօսք կը տայ այնուհետեւ ինքը իւր սիրտը ամեններն չքննել, երակազարկը չհամրել ե այլն:

Ի՞նչ էք կարծում—այդ վնասակար՝ շօշափելու սովորութիւն թուղնելը եղաւ իսկապէս և հիւանդի բժշկութիւնը իւր կարծեցեալ սրտի հիւանդութիւնից:

Գերջապէս դուք լսած պէտք է լինիք, որ բժշկութեան հետեւող ուսանողները, երբ սկսում են առաջին անգամ դրքերով ուսումնասիրել հիւանդութեանց երեսյթները, շատերը ենթարկվում են զանազան կասկածանքների իրանց առողջութեան վրայ. Մէկի սիրտն է չափազանց բարախում, միւսի լեարդը աւելի ուռած կ'երեսյ, երրորդը իւր մէջ երիկամանց տկարութեան նշաններ է տեսնում, այս բոլորը անցողական բաներ են, որ կարելի է կոչել ռուսանողական երևակայական հիւանդութիւնք»:

Ի՞նչ է այս բանի բացարութիւնը... այն է, որ ռուսանողները կարդալով սրտի կամ լեարդի հիւանդութեանց մասին՝ ուշադրութիւնը դարձնում են իւրեանց այդ գործարանների վրայ և վախի ազդեցութեան են թարկվում, որով հանդարտ մտածել և համեմատել չեն կարող, քանի որ աչքով տեսած չեն այդ հիւանդութեանց լսկական պատկերը կամ բոլոր երևոյթները.

Այս օրինակներից մննք կարող ենք եղակացնել թէ՝ մարդս քանի

շատ անհաստատ, անձիշտ, խառնաշփոթ տեղեկութիւններ ունենա, այնքան նորա ուշադրութիւնը աւելի դիւրութեամբ կարող է կեղրոնանալ երեակայական զգացումների վրայ. Եւ զարձեալ քանի շատ մարդուս միտքը զարգացած է գործնական ճիշտ զաղափարներով, այնքան և նորա ուշադրութեան ոյքը աւելի գորեղ և վարժ կը լինի, առաւել սակաւ կ'ենթարկուի անորոշումն երի, ուրեմն և կրքերի ազգեցութեան:

Այստեղ ակամայ միտս է ընկնում պատմութիւն մի կապիկ խաղացնողի մասին, որ զարմանալի շուտ կարողանում էր նոր բռնուած կապիկների մէջ ջոկել որը աւելի հասկացող դուրս կը գայ, նա մի անգամ բացատրեց իւր գաղանիքը. «այն կապիկը, ասաց, որ սովոր չէ իւր ուշադրութիւնը մի քանի բոպէ կեղրոնացնել ցոյց տուածս առարկայի վրայ, այն անդազար հետեւում է նորանոր երևոյթների (ճանճի թուչելուն, մի թեթև ձայնի և այլն)»—նորանից բան դուրս չի գալ»:

Նայենք այժմ երեխաններին, ապոյշ մարդկանց, վայրենի ցեղերին, մենք կը տեսնենք, որ ամէն հաճոյական կամ անհաճոյ տպաւորութիւն, նոցա մէջ առաւել շուտ կիրք է յառաջ բերում, վախի, նախանձի և այլ կրքերի ազդեցութեան ենթարկում, որովհետև նոքա չունին բաւական մեծ պաշար մտածմանց և համեմատութեանց, ինչպէս զարգացած մարդն է, որ սովորած լինին իւրեանց ուշադրութիւնը ծանր և նշանաւոր իրողութեանց վերայ կեղրոնացնել և այդ կերպ կրքի ազդեցութիւնը պակասացնել: Թէ մտքի չքաւորութիւնը որքան նպաստում է կրքերի չափազանց ներգործութեան այդ ամենից շատ երեւմ է՝ օրինակ՝ հարուստ դասի կանանց վրայ, որոնք մի սրոշեալ տնտեսական կամ մանկավարժական և կամ մի այլ օգտաւէտ, կեանքի համար կարեոր՝ զբաղմունք չունենալով՝ իւրեանց ուշադրութիւնը հարկաւ կիրակաւ կիրակոնացնեն զանազան թեթև զդացմունքների վրայ: Հետաերկը¹⁾ կանանց 100 ից, կարելի է ասել, 40–50-ը իւրեանց դատարկ՝ բամբասասէր, աննպատակ և անգործ կեանքի զոհերն են:

Այսպիսի կանայք երեխանների նման դիւրագրիութիւնը սոցա վրայ շատ շուտ ազդում է ամէն մի տարօրինակ երեսյթ և ակամայ նմանութեան ձգտումներ յառաջացնում:

Ահա այս պատճառներից է, որ շատ անգամ ջղային ցնցողական հիւանդութիւնք կանանց մէջ է պի ի ե մի ի նման տարածվում են: Ճողովրադական կեանքից և պատմութիւնից յայտնի են դէմքերը, երբ մեծ խումբ կանայք ուխտ գնացած ժամանակ՝ մէջները ընկնաւուր հիստերիկ հիստերու էպիլեպտիկ) կինէ պատահեալ՝ ուխտաւորների շատ մասը սկսել են նոյն ցնցողական երևոյթները ներկայացնել, ինչ որ ընկնաւուրը:

¹⁾) Զղային հիւանդութիւն, չափազանց դիւրագրգութիւն, (ընկնաւոր կանայք:)

Այս մասին շատ հետաքրքրական պատմութիւններ կան, որ այժմ տեղը չէ, այսքան միայն կ'ասեմ այժմ, որ մեր օրիորդաց դպրոցներից պէտք է աշխատել հեռու պահել ցնցողական հիւանդութիւնք ունեցողներին:

Ազգանից շատերը, տիկնայք և տեղբեր, զուցէ ձեր մտքում ինձ առաջարկում էք հիմայ մի հարց թէ՝ կրքերի ազդեցութեան տակ զանազան ջղային հիւանդութեանց ենթարկուելը՝ աւելի տարածուած է զարգացած կանանց մէջ քան ստորին զասերի. ուրեմն՝ որպէս թէ՝ որ տեղ մտաւոր պաշարը շատ է, այստեղ մենք տեսնում ենք կրքերի չափազանց տիրապետութիւնը։ Բայց այստեղ մի բան չպիտի մոռանաք. բարձր զամփ կը թութիւնը, նոյն իսկ մեր երիտասարդաց շատերի կրթութիւնը ոչ թէ ու շղրծութեան ոյժը զօրեղացնելու. վրայ է հիմնուած, այլ միմիայն յիշողութիւնը զանազան անորոշ տեղեկութիւններով լքցնելու. Մեր բարձր գաղափարները այն ժամանակ միայն մեր մշտական ուշազրութեան առարկայ և կրքեր կառավարող ոյժ են դառնում, երբ նոքա ամրապնդուած են մեր մէջ անձնական փորձառութեամբ, երբ նոքա դառնում են մեր երկրորդ մարդկային ՆՍՐ՝ հաղատակեցնելով սորան մեր սկզբնական դզացմանց ազդեցութեան տակ եղած կենդանական ԱՍԲ։

Մեր հարուստ դասի կրթեալ կանայք և շատ երիտասարդներ ոտաւ-նալով նորանոր դաղափարներ միշտ պատրաստի, առանց սեփա-կան աշխատութեան և փորձերի, առանց իւրեանց ուշագրու-թիւնը լիակատար գրաւող գործումէութեան, կեանքի մէջ ոչինչ ինքնու-րոյն չեն կատարում, բացի նոր դաղափարներ, նոյս հետ նորանոր զգա-ցումներ փոփխակի՝ առանց մի որոշ և հաստատ նպատակի անխտիր ընդունելը, այդպէս կրթեալների վերջն այն է լինում, որ նո-ցա ուշագրութիւնը միշտ զբաղուած է իւրեանց անհամար բաց անորոշ զգացումներով. որովհետեւ լիչողութեամբ՝ առանց բազմակողմանի փորձերի ստացած զրքերի գաղափարները շուտով անհետանում են, իսկա-կան մտաւոր պաշար չզգութած, մնում են միայն անորոշ զգացումները...

Ընդհակառակը վեր առնենք օրինաւոր կերպով զարգացող մարզը, մենք կը անեսնենք, որ նա քանի շատ փորձվում է, քանի շատ աշխատութիւնք է կատարում զիտութեան, արհեստների, զործնական պարագմանց ասպարիգում, — այնքան աւելի նորա ուշադրութիւնը զօրեղ է. սաստիկ կը քերի յուզմունքը նա կարող է մոռացութեան տալ՝ իւր ուշադրութիւնը անդադար զբաղեցնելով հետաքրքրական արհեստների կամ զիտութեանց մանրամասնութիւններով.

Ուրեմն՝ կրթութեան գործի մէջ՝ փոք ձառական, գործն ական
պարագաներով՝ մարդուս ուշազբութեան ոյժը գօրեղացնելով՝
մենք պիտի պատրաստենք մի սերունդ, որ աւելի լաւ քան զմեզ պիտի
կարողանայ կառավարել իւր կրթերը, և եթէ յուզուի՛ աւելի բարձր կրթե-
րով յուզուի՛, քան թէ մեր շատերի գործունէութեան սովորական շարժառիթ-

Ներհեն—չափազանց անձնամիրութիւն, ափառասիրութիւն, նախանձ, անձնաթեթ բարկութիւն և այլն:

Մի երկու թեթե գործնական օրինակներով հաստատեմ մերը թերած ընդհանուր մաքերը: Դիմումատար մ ընտակարգեր զանազան պահպան պահպան ձմեռիտ ձմարիտ և կարստնաւոր կրթութիւնով մենք կարող ենք՝ օրինակ՝ բոլորովին աղատել մէր Երեխանիներին այն աւելորդ երկիւղի կրքերից, որք տիրապետում են մեր հասարակութեան մէջ, ինչպէս և ժողովրդի մէջ:

